



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՎԱՏԱԿԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՏԱԿԱՐԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԻԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՄԲՈՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝

տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Մելքումյան

Կատարողներ՝

տ.գ.թ. Ա.Վ. Քալանթարյան

տ.գ.թ., դոցենտ Ֆ.Ֆ. Բահարյան

դասախոս Մ.Ա. Ավետիսյան

ասպիրանտ Հ.Ժ. Հովակիմյան

Դ/018

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

2012–2013 թթ. ՆԵՐՎԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

**«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
2014**

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05
Ա 161

**Երաշխավորվել է հրատարակության
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից**

Արդյունաբերական քաղաքականությունը որպես երկրի տնտեսության մրցունա-
Ա 161 կության բարձրացման միջոց/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Մ.Ս. Մելքումյան; Կա-
տարողներ՝ Ա.Վ. Քալանթարյան, Ֆ.Ֆ. Բահարյան, Մ.Ա. Ավետիսյան, Հ.Ժ. Հովակիմ-
յան.- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-74 էջ:

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05

ISBN 978-9939-61-081-8

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

Ներածություն

Մրցունակությունը, որի հիմքում արտադրողականության բարձր և մշտապես աճող մակարդակն է, չի կարող կանխորոշվել սոսկ ռեսուրսներով ապահովվածությամբ: Դա կապված է երկրի ռեսուրսները և բիզնես միջավայրի գործոնները արդյունավետորեն օգտագործելու ունակության հետ:

Մակրոտնտեսական կայուն միջավայրը և սոցիալական ու քաղաքական ինստիտուտները էական, սակայն ոչ բավարար պայման են մրցունակության համար: Ընկերությունների արտադրողականությունը և, հետևաբար, միջազգային մրցունակությունը պայմանավորվում են միկրոտնտեսական երեք գործոնների համախմբով՝

- գործարար միջավայր,
- տնտեսության ոլորտների համալիր զարգացման մակարդակ,
- ընկերությունների ռազմավարությունների և գործառնությունների մակարդակ:

Ցածր արտադրողականությամբ ոլորտների գերակայությունը ՀՆԱ կառուցվածքում դեռևս ՀՀ տնտեսության հիմնարար թերություններից մեկն է: ՀՀ արտադրողականությամբ առաջատար երեք ոլորտները (ֆինանսական միջնորդություն, հանքագործություն և շինարարություն) ընդգրկում են երկրի զբաղվածության ընդամենը 9%-ը, այնինչ աշխատուժի գրեթե կեսը կենտրոնացած է նվազագույն արտադրողականություն ունեցող երեք ոլորտներում:

Արդյունաբերական ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմաններ ապահովելու, տեղական արտադրությունը խթանելու, նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով ՀՀ Կառավարությունը կիրառում է պետական աջակցության համալիր գործիքակազմ՝ ուղղված նոր ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով արտահանման ծավալների ավելացմանը և ներմուծման փոխարինմանը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ տնտեսության բազմազանեցման, ճյուղային կառուցվածքի բարելավման անհրաժեշտությունից, ՀՀ Կառավարությունն իրականացնում է տնտեսական քաղաքականության շեշտադրումների վերանայում: Ի լրումն մակրո- և միկրոտնտեսական միջավայրերի բարելավմանն ուղղված ջանքերի՝ նա նախաձեռնել է տնտեսական աճի խթանման առավել ակտիվ և նպատակային քաղաքականություն: Դա ենթադրում է արտահանման վրա հիմնված տնտեսական աճի խթանում, ոլորտային առավել հստակ գերակայությունների սահմանում, մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունավետ հարթակների ստեղծում և գործողությունների ներդաշնակեցում:

Իրականացվող արդյունաբերական քաղաքականության հիմքում արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի զարգացման աջակցման միջոցով տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումն է՝ շեշտադրելով վերամշակող արդյունաբերության զարգացումը:

Այսպիսով՝ ցանկացած երկրի տնտեսության բնականոն զարգացման համակարգում կարևոր դեր ունի պետության տնտեսական քաղաքականությունը, որի նպատակն է հնարավորությունների ու կարողությունների անընդհատ ընդլայնման ու կատարելագործման սիներգիկ ազդեցությամբ հասնել հասարակության կյանքի որակի բարձրացմանը և ամրագրել ՀՀ ուրույն տեղը համաշխարհային տնտեսությունում:

Տնտեսական զարգացման այս պայմաններում այսօր կարևորվում է արդյունաբերական քաղաքականության իրականացումը՝ որպես տնտեսական փոխակերպման առաջնային նախապայման. մասնավորապես՝ տեխնոլոգիական համալիրների ներմուծման խրախուսումը, վերազգային կորպորացիաների՝ ՀՀ տնտեսություն մուտք գործելուն անհրաժեշտ պայմանների ստեղծումը, գոյություն ունեցող հեռանկարային արտադրական համալիրների արդիականացումն ու

տնտեսության իրական հատվածին պետության ակտիվ աջակցությունը կազմում են ՀՀ արդյունաբերական քաղաքականության առանցքային ուղղությունները՝ նպատակ ունենալով մեծացնելու տնտեսության դիվերսիֆիկացիայի աստիճանը և ընդլայնելու արտահանելի հատվածը: Վերջինս հանդիսանալու է երկրի գլոբալ մրցունակության բարձրացման գործառնական նպատակը, և որոշակի ժամանակահատվածում արդյունաբերական քաղաքականությունը հիմնականում, եթե ոչ ամբողջությամբ, ուղղվելու է դրա իրագործմանը: Այսինքն՝ արդյունաբերական քաղաքականությունը կամ արդյունաբերության կառուցվածքային զարգացման քաղաքականությունը պետության տնտեսական քաղաքականության նյութականացման հիմնական բաղադրիչներից մեկն է և նախանշում է տնտեսական աճի ապահովման ու տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը:

Եթե այլ ոլորտներում տնտեսական քաղաքականության կիրառման շրջանակները որոշվում են ըստ դրանց առանձնահատկությունների, ապա արդյունաբերական քաղաքականությունն ամբողջապես կախված է պետության կողմից իրականացվող՝ տնտեսության ինդուստրացման մակարդակից՝ սերտաճելով պետության ընդհանուր տնտեսական քաղաքականության հետ:

Արդյունաբերական քաղաքականությունը նպատակաուղղված է տնտեսության հետագա կայունացմանն ու զարգացմանը հիմնականում հետևյալ ուղիներով.

- ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավում,
- ներդրումային միջավայրի ակտիվացման հետևողական աջակցում,
- միջազգային նորմերին համապատասխանող և գործարարության զարգացմանը նպաստող ներ-

դաշնակ օրենսդրական դաշտի ստեղծում և կատարելագործում,

- հանրապետության տնտեսության միասնացում համաշխարհային տնտեսությանը,
- արտահանման հանդեպ ներմուծման բացասական հաշվեկշռի կրճատում,
- արտահանման կառուցվածքում գիտատար արտադրատեսակների մասնաբաժնի ավելացում,
- ազգային նորաստեղծական համակարգի ձևավորում ու զարգացում,
- գիտության և տնտեսության իրական հատվածների միջև կապերի սերտացում,
- մտավոր սեփականության, հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության համակարգի հետագա կատարելագործում,
- փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության համակարգի շարունակական կատարելագործում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովում:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումների համախումբ է, որի նպատակը արտահանման աճը և դիվերսիֆիկացիան է:¹

Գլոբալացումը բացել է սահմաններն ու շուկաները պետությունների, դրանց տնտեսությունների և ընկերությունների համար ամբողջ աշխարհում: Նման վիճակն առաջացրել է նաև մրցակցության ճնշման մեծացում գրեթե բոլոր շուկաներում: Համաշխարհային շուկան չի առաջարկում պաշտպանություն կամ սուբսիդիաներ (լրահատկացումներ), և ոչ մրցունակ ապրանքներն ու ծառայությունները չեն կարող անցնել համաշխարհային շուկայի քննությունը: Մրցունակու-

¹ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, էջ 3:

թյունը պետությունների, դրանց տնտեսական ոլորտների և գործարարության համար ստեղծում է շուկաներն ընդլայնելու, իրական աշխատավարձերը բարձրացնելու, աշխատատեղերն ավելացնելու, քաղաքացիների գնողունակությունը բարձրացնելու ներքին և արտաքին հնարավորություններ: Դա նաև ապրանքների և ծառայությունների վաճառքից ավելի մեծ շահույթ ստանալու միջոց է: Մրցունակ լինել՝ նշանակում է հասկանալ շուկան և կարողանալ բավարարել դրա պահանջները, ինչն էլ, ի վերջո, հանգեցնում է երկրի տնտեսական աճին: Մրցակցության արդյունքում բարելավվում է արտադրանքի որակը և մեծանում դրա վաճառքից ստացվող եկամուտը: Այս զարգացումների պայմաններում համաշխարհային շուկայում կկարողանան գոյատևել միայն այն ընկերությունները, որոնք ավելի լավ արտադրանք և ծառայություններ կտրամադրեն:

Պետության տնտեսական կայունության ճանաչման գործընթացում կարևոր տեղ է հատկացվում մրցունակ ազգային տնտեսության կայացմանը և զարգացմանը, ինչն անհնար է առանց հնարավոր հասանելի մեխանիզմների կիրառման, որոնք արագացնում են վերակառուցումը և կատարելագործում ներքին շուկայական ինստիտուտները: Նախևառաջ, խոսքը տնտեսության մրցակցային մոդելի ընտրության, գերակա ճյուղերի, որոնք ունեն մրցունակության բարձրացման տնտեսական ներուժ, այն տարրերի և գործոնների մասին է, որոնք ազդում են մրցակցային հարաբերությունների վրա արտաքին տնտեսական մրցունակության տեսանկյունից:

Դասական մոտեցմամբ՝ մրցունակ է համարվում այն երկրի տնտեսությունը, որի տնտեսավարող սուբյեկտներն ազատ մրցակցության պայմաններում արտադրում են այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք բավարարում են համաշխարհային շուկայի պահանջները: Սակայն վերջին տարիներին երկրի մրցունակություն ասելով՝ բնորոշվում են տնտեսա-

վարողների և պետության համատեղ հնարավորություններով այլ երկրների հետ մրցակցելու, մարդկության զարգացման համար սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմաններ ստեղծելու գործընթացները: Երկրի մրցունակությունը պետք է ձևավորվի **սիներգետիկ էֆեկտի** ազդեցությամբ, ինչն ապահովվում է տեխնոլոգիական, ֆինանսական, առևտրային, վարչական և մշակութային հնարավորությունների, գիտելիքների և կարողությունների բազմաշերտությամբ: Նոր համաշխարհային կարգը էապես մեծացնում է պետության դերը տնտեսական բարենպաստ միջավայրի ապահովման գործում:

Առանցքային գործոնը, որ ընդունակ է բարձրացնելու մեր երկրի և արդյունաբերության ճյուղերի մրցունակությունը, **նորաստեղծական զարգացումն է**, ինչը ենթադրում է գիտատեխնիկական, արտադրական, ֆինանսական ու սոցիալական գործունեության փոխկապակցվածություն ինստիտուցիոնալ նոր միջավայրում: Հայաստանի Հանրապետությունն ընդունել է գիտելիքահենք տնտեսություն կառուցելու անհրաժեշտությունը: Ուստի պետք է հետևողական քայլեր ձեռնարկել արդի և մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական առաջընթացի միջոցով Հայաստանի Հանրապետությունը դարձնելու զարգացած արդյունաբերությամբ երկիր:

Հետևողականորեն իրականացվող արդյունաբերական քաղաքականությունն ի վիճակի է վերակառուցել արդյունաբերության կառուցվածքը, բարձրացնել հայրենական արտադրանքի մրցունակությունը:

2012-2013 թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային աշխատանքի շրջանակում գիտահետազոտական խումբը կատարել է առանձին ոլորտների վերլուծություններ, որոնց հիմնական արդյունքները ներկայացնում ենք ստորև:

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հանքահումքային ռեսուրսների առկայությունը ցանկացած երկրի տնտեսությանը տալիս է համեմատական առավելություն, քանի որ դրանք ունեն կարևոր արտադրական-արդյունաբերական նշանակություն: Հայաստանը ռեսուրսներով այնքան էլ հարուստ չէ, բայց մեր երկրում կան մետաղական և ոչ մետաղական ռեսուրսների էական պաշարներ: Տարբեր գնահատականներով պղնձի և մոլիբդենի պաշարների 2-5 տոկոսը գտնվում է մեր երկրում:

Զբաղեցնելով Հարավային Կովկասի ընդամենը 16%-ը՝ ՀՀ-ն, իր հետաքրքիր և բարդ երկրաբանական կառուցվածքի շնորհիվ, ունի օգտակար հանածոների բազմազան պաշարներ: Ներկայումս ՀՀ լեռնահանքային համալիրը և դրա հումքային ներուժը բաղկացած են հիմնականում երկաթի, պղնձամոլիբդենային և պղնձի, ոսկու, ոսկի-բազմամետաղային, այլ բազմամետաղային հանքավայրերից՝ ցինկի, կապարի և հազվագյուտ մետաղների պարունակությամբ, հարստացման, վերամշակման և ծովման արտադրություններից:

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 700 հանքավայր, այդ թվում՝ 33 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում է շուրջ 450-ը, այդ թվում՝ 24 մետաղական: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 8 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 15 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային, 1 այլումինահանքային և 1 մագնեզիտասիլիկատային հանքավայրեր²:

Հանրապետության մետաղական հանքավայրերի շուրջ 33.3%-ը և ոչ մետաղական հանքավայրերի 29.6%-ը դասվում են առաջին

խմբին: Երկրորդ խմբին են դասվում մետաղական հանքավայրերի 33.3%-ը, ոչ մետաղական հանքավայրերի 51.7%-ը, իսկ երրորդ խմբին համապատասխանաբար՝ 33.4%-ը և 18.7%-ը:

Հետևաբար՝ ՀՀ տնտեսության խնդիրներից են այդ ռեսուրսների օգտագործումից օգուտներ քաղելը և, միևնույն ժամանակ, դրանց արդյունահանումից առաջացող վնասները նվազագույնի հասցնելը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են հանքարդյունաբերական արտադրության ծավալները մետաղական և ոչ մետաղական հանքաքարերի գծով:

Աղյուսակ 1

ՀՀ չվերականգնվող ռեսուրսների և հանքագործության հիմնական ցուցանիշները³

	2007	2008	2009	2010	2011
Մեքաղական հանքային արտադրարեսակների արտադրություն					
Պղինձ պղնձի խտանյութում, տ	17400	18540	22968	30707	33213
Ցինկ ցինկի խտանյութում, տ	2270	3430	3215	6600	7170
Մոլիբդեն մոլիբդենի խտանյութում, տ	4211	4385	4280	4292	4722
Ֆեռոմոլիբդեն, տ	5977	5323	5144	5126	5525
Պղինձ կոնվերտորային, տ	6954	6480	6858	7644	8876
Ոսկի, կգ	565	565	682	1033	-
Արծաթ, կգ	6900	9200	9000	16400	-
Ոչ մեքաղային հանքային արտադրարեսակների արտադրություն					
Ապրանքային բետոն, 1000մ ³	141.6	216.8	410.0	413.2	330.8
Ցեմենտ, 1000տ	722	770	467	488	422
Գաջ, 1000տ	54.6	45.9	40.1	38.7	34.0
Որմնանյութեր, 1000 մ ³	101.4	121.8	91.2	143.4	141.7
Ոչ հանքային շինանյութեր, 1000մ ³	700	757	737	1285	1144
Ծակոտկեն լցանյութեր, 1000մ ³	274	422	303	269	228
Երեսպատման սալեր բնական քարից, 1000մ ²	221	214.8	291.2	21.8	25.9
Հանքային ջրեր, 1000 լ	32227	35873	25459	30000	29233
Աղ, 1000 տ	34.8	37.3	29.4	29.4	35.6

² Mining Industry in Armenia, p. 39.

³ www.armstat.am

Հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևոր և արտահանելի ոլորտներից մեկն է: Արդեն երկու դար է, որ ՀՀ-ում իրականացվում է հանքերի արդյունաբերական մշակում, և այսօր արդեն կարևորվում է այն հանգամանքը, որ կատարվի խոր վերամշակում, այսինքն՝ հանքաքարը մշակման հնարավորինս շատ շրջափուլ անցնի: Բացի հանքաքարի արդյունահանումից և խտանյութի արտադրությունից, այսօր արդեն իրականացվում է երկրորդ շրջափուլը՝ խտանյութից մետաղի ստացումը: Այստեղ կարևորագույն խնդիրը, իհարկե, բնապահպանության և զբոսաշրջության զարգացման հարցերը երկրորդ պլան չմղելն է:

Համաշխարհային տնտեսական վիճակի էական վատթարացումը հատկապես բացասական ազդեցություն ունեցավ բաց տնտեսություն ունեցող երկրների, այդ թվում՝ ՀՀ տնտեսության վրա: ՀՀ-ում համեմատաբար ավելի խոր անկման հիմնական պատճառը դեռևս 2000 թվականից արձանագրվող տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններն էին, այն է՝ 2000-2008 թվականներին տնտեսական բարձր աճը պայմանավորված էր ոչ արտահանելի հատվածի և հատկապես շինարարության ճյուղի աննախադեպ աճով, ինչը ՀՀ ներհոսող կապիտալ հոսքերի կտրուկ ավելացման և շինարարության ոլորտում այդ միջոցների կենտրոնացման արդյունք էր: Դրա վկայությունն է այն, որ 2009 թվականին արձանագրված 14.1% անկման 10.5 տոկոսային կետը բաժին էր ընկնում շինարարության անկմանը: Սակայն կարևոր է այն հանգամանքը, որ չնայած 2009 թվականին արձանագրված խոր անկման, հետճնաժամային ժամանակահատվածում, շնորհիվ համակարգված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների, հնարավոր եղավ խուսափել մակրոտնտեսական վիճակի ապակայունացումից՝ արդեն 2010-2011 թվականներին արձանագրելով տնտեսական աճի վերականգնման արագացող միտումներ: Հատկանշական է, որ էական բարելավում է նկատվել նաև տնտեսական աճի կառուցվածքում՝ հոգուտ արտահանելի հատվածի մեծացման, ինչը տնտեսական ապագա աճերի ձևավորմանը կհաղորդի նոր որակ՝ կայունություն: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ ճգնաժամից և տնտեսական աճի բարձր մակարդակներից հետո ՀՀ տնտեսությունը բնականորեն

կտեղափոխվի ավելի ցածր տնտեսական աճի դաշտ, որը, սակայն, կլինի առավել որակյալ և կայուն ցնցումների (շուկերի) նկատմամբ, ինչը շատ կարևոր է՝ հաշվի առնելով ներկայիս համաշխարհային տնտեսության զարգացման անորոշությունները: Տնտեսության զարգացման վերոնշյալ առանձնահատկություններն իրենց արտացոլումն են գտել ինչպես տնտեսության տարբեր հատվածների զարգացումներում, այնպես էլ մակրոտնտեսական քաղաքականության ուղղություններում:

Ընթացիկ և նախորդ 2 տարիների ընթացքում համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտում նկատվել է բազային պահանջարկի աճ, որը հիմնականում բավարարվել է զարգացող երկրների շուկաների դիմամիկ աճով: Չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ուժեղ հարված հասցրեց նաև այս ճյուղին, սակայն 2010-2011 թվականներին հանքարդյունահանող ընկերություններն առաջինն ապահովեցին և նույնիսկ գերազանցեցին նախաճգնաժամյան ցուցանիշները:

Հանքարդյունաբերությունը, որը ներառում է օգտակար հանածոների արդյունահանումը և առաջնային մշակումը (նաև հարստացումը), 2011 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ կազմել է ՀՀ համախառն ներքին արդյունքի մոտ 4.5%-ը, արդյունաբերական արտադրանքի 17%-ը և արտահանման 30%-ը:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տվյալներով 2011 թ. ՀՀ-ից արտահանվել է մոտ 700 միլիոն դոլարի մետաղ: Սա ՀՀ արտահանման ընդհանուր ծավալի 52.5 տոկոսն է: Արտահանվող մետաղների կեսից ավելին պղինձն է՝ 380 մլն դոլար: Ընդ որում՝ պղինձի խտանյութի արտահանումը հասել է 260 միլիոն դոլարի, մշակված պղինձը կազմում է 9 հազ. տոննա, պղինձի ջարդոնը՝ 4.4 հազ. տոննա:

Արտահանման ծավալներով երկրորդ տեղում մոլիբդենն է: Արտահանվել է 5.5 հազ. տոննա ֆեռոմոլիբդեն՝ 121 մլն դոլար մաքսային արժեքով, գրեթե 15 մլն դոլարի մոլիբդենի թափոն և ջարդոն: Բացի այդ, արտահանվել են նաև այլումինե նրբաթիթեղներ՝ 87 մլն դոլար մաքսային արժեքով, ոսկի՝ 67 մլն դոլար արժեքով, ցինկի խտանյութ՝ գրեթե 13-14 մլն դոլարի չափով:

ՀՀ տնտեսության զարգացման մեջ հանքարդյունաբերությանը վերաբերող ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Հանքարդյունաբերության ոլորտի հիմնական ցուցանիշները

	2007	2008	2009	2010	2011
Մասնաբաժինը ՀՆԱ-ում, %	3.6	2.6	2.8	4.2	4.5
Մասնաբաժինը արդյունաբերության մեջ, %	15.9	12.6	13.2	17.7	17.0
Հանքագործական արդյունաբերության համախառն եկամուտը, մլն. դրամ	113824	93266	88557	145537	170168
Տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժինը հանքագործությունում, %	0.78	0.74	0.67	0.69	1.3
ՀՀ արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար	1152.3	1057.2	710.2	1041.1	1334.3
Հանքագործական արտադրանքի արտահանման ծավալը, մլն ԱՄՆ դոլար	174	173	146	307	404
Հանքագործական արտադրանքի մասնաբաժինը արտահանման մեջ, %	15.1	16.4	20.5	29.5	30.3
ՀՀ ներմուծման ծավալները, մլն ԱՄՆ դոլար	3267.7	4426.1	3321.1	3748.9	4145.3
Հանքագործական արտադրանքի ներմուծման ծավալը, մլն ԱՄՆ դոլար	516	665	541	666	822
Հանքագործական արտադրանքի մասնաբաժինը ներմուծման մեջ	15.8	15.0	16.3	17.7	19.8
Մասնաբաժինը հարկային եկամտի մեջ, %	-	-	2.5	7.4	-
Զբաղվածները, ընդամենը	1101.5	1117.6	1089.4	1104.8	1175.1
Հանքարդյունաբերություն	8.6	8.3	7.3	7.6	15.5

ՀՀ լեռնահանքային ձեռնարկությունների ներդրումային գրավչության բարձրացման և այս ոլորտում ձեռնարկատիրության հեռանկարային զարգացման ապահովման հարցում չափազանց մեծ նշանակություն ունի ճշգրիտ և ճկուն հարկային քաղաքականության վարումը: Դա բավականին լուրջ խնդիր է, քանի որ այս ոլորտի հանդեպ պետությունը երկակի ֆիսկալ դեր է կատարում՝ միաժամանակ հանդես գալով որպես բարձրագույն հարկային իշխա-

նություն և բնական ռեսուրսների սեփականատեր: Այս երկակիությունը ճշգրիտ արտացոլող հարկային համակարգը պետք է իր մեջ համատեղի պետության կողմից իրեն պատկանող ռեսուրսների շահագործումից համապատասխան եկամուտների ստացումը և հնարավոր ներդրողների խթանման նպատակով՝ լեռնահանքային արդյունաբերության մեջ ներդրումային նախագծերի տնտեսական արդյունավետության ապահովումը: Այս ոլորտում հարկային համակարգի գլխավոր խնդիրը պետք է լինի պետության՝ իր բնական ռեսուրսների դիմաց ստացվող եկամուտների այնպիսի բաշխումը, որը կնպաստի կայուն տնտեսական աճին և լեռնահանքային ձեռնարկությունների կողմից երկարաժամկետ շահույթի ստացմանը: Այս խնդրի իրականացման համար հարկային համակարգն ու հարկային կառավարումը պետք է լինեն պարզ, թափանցիկ, վերահսկելի և հիմնված հեշտ հասանելի տվյալների վրա: ՀՀ լեռնահանքային արդյունաբերության մեջ ձեռնարկատիրության զարգացման և արտասահմանյան ներդրումների խթանման համար հանքահումքային ոլորտի հարկման պայմանները պետք է համապատասխանեն միջազգային մակարդակով մրցունակ հարկման պայմաններին: Ինչպես գիտենք, 2011 թ. նոյեմբերի 28-ին ընդունվել է ՀՀ ընդերքի մասին նոր օրենսգիրք, որ ունի որոշակի առաջադիմական դրույթներ՝ ինչպես հարկման, այնպես էլ հանքերի փակման, շրջակա միջավայրի ազդեցության հետ կապված:

Հանքարդյունաբերությունն ապահովում է հարկային մուտքերի գրեթե 7%-ը, ընդ որում՝ հարկերի մեծ մասը բաժին է ընկել «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին:

Ընդունված նոր օրենքի համաձայն՝ վճարվող ռոյալթիները հաշվարկվում են հետևյալ կերպ. $R = 4 + [C/(C \times 8)] \times 100$, որտեղ՝ R-ը ռոյալթիի դրույքաչափն է տոկոսով, C-ն շահույթն է նախքան հարկումը՝ դրամով, <-ն արտադրանքի իրացումից հասույթն է՝ առանց ԱԱՀ-ի՝ դրամով: Հաշվարկման այս մեթոդը, իհարկե, ունի առավելություններ վարչարարության պարզ կիրառման և կառավարության՝ երաշխավորված եկամուտների ստացման տեսանկյունից, սակայն, մյուս կողմից էլ՝ այն ռիսկային գոտի է ստեղծում համեմատաբար փոքր շահութաբերությամբ գործող հանքերի համար:

Նոր սահմանված դրույքաչափը մոտեցվել է հանքագործության համաշխարհային միջին ցուցանիշին (4.14%): Սակայն համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների՝ 2012 թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 13.3 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 81.3%-ով (6.0 մլրդ դրամով): Հաշվետու ժամանակահատվածում այս աղբյուրից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 7.7 մլրդ դրամ:

Նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ այլ հարկերը նվազել են 40.6%-ով կամ 4.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օրենսդրական փոփոխություններով, որոնց արդյունքում հանքարդյունահանողների կողմից նախկինում վճարվող և այլ հարկային եկամուտներում հաշվառվող բոնուսի, կոնցեսիոն վճարի և ռոյալթիների փոխարեն սահմանված ռոյալթիները հաշվառվում են որպես բնօգտագործման վճարներ: Այսպիսով ակնհայտ է՝ վճարի դրույքաչափի մոտ 4 անգամ բարձրացումը չի հանգեցրել համապատասխան մուտքերի ավելացման: Սակայն դա կարող է պայմանավորված լինել նաև շուկայում մետաղների գների տատանումներով: 2000-2011 թվականների ընթացքում պղնձի համաշխարհային գինը աճել է շուրջ 5 անգամ՝ 2000 թվականի 1813 ԱՄՆ դոլարից՝ 1 մետրիկ տոննայի դիմաց, 2011 թվականին դարձել է 8828 ԱՄՆ դոլար, մինչդեռ պղնձի համաշխարհային արտադրության ծավալներն ավելացել են ընդամենը 22 տոկոսով: Հայաստանում պղնձի խտանյութի արտադրությունը, համեմատած համաշխարհային արտադրության ծավալների փոփոխության հետ, այդ ժամանակահատվածում ավելացել է զգալիորեն՝ 2.75 անգամ:

Ըստ ՄԱԿ-ի և Համաշխարհային բանկի կատարած հետազոտությունների արդյունքների՝ հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից ներդրումներ կատարելու վերաբերյալ որոշումներ ընդունելու վրա ազդող 10 հիմնական չափանիշներն են՝

1. տվյալ հանքահումքի երկրաբանական պոտենցիալը,
2. հավանական գործունեության շահութաբերությունը,
3. իրավական երաշխիքները և թույլտվությունը,
4. շահույթի հետվերադարձի հնարավորությունը,

5. հանքահումքի ոլորտում քաղաքականության շարունակականությունը,
6. արտադրության իրական վերահսկումը,
7. շահագործման պայմանների և ժամկետների կայունությունը,
8. շրջակա միջավայրի գծով պարտավորությունները նախապես որոշելու հնարավորությունը,
9. հարկային պարտավորությունները նախապես որոշելու հնարավորությունը,
10. հարկային ռեժիմի կայունությունը:

Ընդ որում, մասնագետները եկել են այն եզրակացության, որ ներդրողների համար հատկապես առանցքային երեք գործոններ են՝ իրավական երաշխիքներ և թույլտվություն, շահագործման պայմանների և ժամկետների կայունություն, շահույթի հետվերադարձի հնարավորություն:

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում զգալի դեր են խաղում օտարերկրյա ներդրումները: 2002-2010 թթ. ընթացքում ոլորտում կատարվել են 390 մլն ԱՄՆ դոլարի ընդհանուր ծավալով կամ տարեկան միջին հաշվով 43 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), որոնց հիմնական բաժինը՝ շուրջ 3/4-ը, իրականացվել է միայն 2004-2007 թթ. ընթացքում (աղյուսակ 1): Ընդհանուր ՕՈՒՆ-ի 77.5 տոկոսը կատարվել է միայն Գերմանիայի կողմից: ՕՈՒՆ-ների հոսքեր են ներգրավվել նաև Կանադայից, Կիպրոսից, Ավստրալիայից և Շվեյցարիայից:

Միևնույն ժամանակ, այդ զարգացումները առաջ են բերել մի շարք հիմնախնդիրներ և մարտահրավերներ, որոնք շատ հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

- հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնոլոգիական պարամետրերի օպտիմալ լուծումների տեխնիկատնտեսական հիմնավորման բացակայությունը, ինչպես նաև հնացած և մաշված տեխնիկայի կիրառումը, որը, որպես կանոն, պայմանավորում է խտանյութի ինքնարժեքի աճ և լեռնահարստացման արտադրության շահութաբերության նվազում,
- շահագործման աշխատանքների ցածր որակական և քանակական ցուցանիշներ. հանքաքարերի մեծ կորուստները և

դրանց վերամշակման ժամանակ հիմնական և ուղեկից բաղադրիչների կորզման ցածր աստիճանը այն վճռորոշ բացասական գործոններն են, որոնք պատճառ են դառնում արտադրության ոչ բավարար արդյունավետության,

- օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման անբավարար համակարգվածությունը, ինչը հանգեցնում է ընդերքում հաշվառված պաշարների 20-30% կորուստների,
- արդյունահանող և վերամշակող արտադրությունների թափոնների չօգտագործումը, բացառությամբ եզակի դեպքերի, որոնք վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների համար կարող են դառնալ հանքային հումքի լրացուցիչ աղբյուր,
- բացառությամբ վերջին տարիներին իրականացվող մոլիբդենի խտանյութի մետալուրգիական վերամշակման՝ ՀՀ լեռնահանքային համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, ցինկի՝ որոշ դեպքերում ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրի տնտեսական ներուժը:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հստակ, հասցեական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը կենսական նշանակություն կունենան ոլորտի ձեռնարկությունների զարգացման համար ազատ շուկայական տնտեսության պահանջներին՝ դեռևս լիարժեքորեն չհամապատասխանող ներդրումային միջավայրի և ոչ լիարժեքորեն կայացած ֆինանսական շուկայի պայմաններում: Ընդ որում, այս ոլորտում պետական արդյունաբերական քաղաքականությունը պետք է այնպես մշակվի, որպեսզի ապահովվեն ինչպես ձեռնարկությունների վերականգնումն ու ընդլայնումը, այնպես էլ դրանց հեռանկարային զարգացումը:

Պետական արդյունաբերական քաղաքականության երկրորդ կարևոր ուղղությունը կապված է հատուկ միջոցառումների իրականացման հետ, որոնք կնպաստեն լեռնահանքային արդյունաբերության մեջ առաջավոր կառուցվածքային վերափոխումներին: Այդ առումով նպատակահարմար է իրագործել լեռնահանքային ար-

տադրանքի ներքին պահանջարկի ընդլայնման, մետալուրգիայում նորարարական գործունեության ակտիվացման, ձեռնարկությունների վերակազմավորման և սոցիալական հիմնախնդիրների լուծման հետ կապված միջոցառումներ:

Արդյունաբերության ոլորտում ձեռնարկատիրության պետական կարգավորման և աջակցության խնդիրների լուծումն անհնարին է առանց համապատասխան պետական արդյունաբերական քաղաքականության մշակման, որը հաշվի կառնի և՛ ձեռնարկատիրության, և՛ ընդհանուր տնտեսության արդյունավետ հեռանկարային զարգացման և մրցունակության բարձրացման ուղիներն ու նպատակները:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում պետական արդյունաբերական քաղաքականության մշակման ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- Օգտակար հանածոների հանքավայրերի պաշարները սպառվող են և անվերականգնելի, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պայմաններ ստեղծել դրանց ռացիոնալ և համալիր յուրացման համար:
- Հանրապետության լեռնամետալուրգիական խոշոր ձեռնարկությունները՝ Քաջարանի, Ագարակի, Ալավերդու և այլ կոմբինատներ, քաղաքգոյացնող ձեռնարկություններ են, և, հետևաբար, դրանց գործունեությունից է կախված նշված քաղաքների, նույնիսկ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը:
- Լեռնահանքային համալիրի ձեռնարկությունների արդյունավետ գործունեությունը կարող է նպաստել մի շարք «արբանյակ» մատակարար և սպառող ճյուղերի զարգացմանը՝ ապահովելով զգալի բազմարկչային արդյունավետություն:

Արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով ՀՀ Կառավարությունն առաջնորդվում է որոշակի առաջնություններով, որոնք հիմնավորված են ճյուղի զարգացման հայեցակարգերով: Այդ առաջնությունների բացահայտման համար Կառավարության կողմից մշակվել են հետևյալ չափանիշները.

- արտահանման և ընդլայնման հնարավորությունների առկայություն,
- նոր աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտություն,
- ՀՀ որակյալ մարդկային ռեսուրսների օգտագործում,
- տնտեսության մյուս ճյուղերի վրա ոլորտի ավելացած գործունեության գործակցի ազդեցություն առկայություն,
- օտարերկրյա ներդրողների համար բարձր գրավչություն,
- ընթացիկ կիսաշրջափակումից և ուղեկցվող տրանսպորտային հիմնախնդիրներից թույլ կախվածություն,
- ոլորտի արտադրանքի ամենաբարձր արժեք-ծավալ/կշիռ հարաբերակցություն և այլն:

Այսպիսով՝ ՀՀ հազվագյուտ մետաղների հանքային բազայի՝ բերված տվյալների վերլուծության հիման վրա կարելի է հավաստել, որ հանրապետությունում առկա է բավական մեծ ներուժ հազվագյուտ մետաղների՝ ռենիումի, սելենի, թելուրի, կադմիումի, բիսմութի և այլ արտադրությունների կազմակերպման համար: Իհարկե, մետալուրգիական արդյունաբերության բազայի ձևավորման հիման վրա հազվագյուտ մետաղների արտադրության կազմակերպումը կապված է մեծ ներդրումների հետ: Բայց, եթե հաշվի առնենք վերևում թվարկված հազվագյուտ մետաղների՝ արդյունաբերության տարբեր ճյուղերում կիրառման տնտեսական բարձր արդյունավետությունը, ինչպես նաև համաշխարհային շուկայում դրանց իրացման հնարավորությունները, ապա այն ծախսերը, որոնք պայմանավորված կլինեն դրանց արտադրությունների կազմակերպմամբ, հետ կգնվեն շատ կարճ ժամկետներում:

Եզրակացություն

Այսպիսով, հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա, կարող ենք ասել, որ միջազգային շուկայում ՀՀ մրցունակությունը մեծապես կախված է կազմակերպությունների՝ նորարարական ապրանքներ ստեղծելու և օտարերկրյա շուկաներ հանելու կարողությունից: Այս տեսանկյունից կարևորվում է նորարարական տնտեսության ձևավորման անհրաժեշտությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա համար Հայաստանն ունի բավարար գիտական ներուժ: Կարևորվում են նաև արդիականացումը ինովացիոն հիմքի վրա և բարձր արտադրողականությամբ արտադրությունների ստեղծումը՝ խրախուսելով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, այդ թվում՝ նաև օտար կապիտալի մասնակցությամբ: Նորարարությունների արդյունավետ ներդրումն արդյունաբերական կազմակերպություններում կնպաստի ինչպես աշխատանքի արտադրողականության աճին, այնպես էլ ապրանքների որակի և մրցունակության բարձրացմանը և, ի վերջո, կազմակերպության վարկանիշի աճին:

Բացի այդ, մրցունակության բարձրացման համար առաջարկվում է Հայաստանում խթանել կլաստերների ձևավորման գործընթացը՝ ներգրավվելով միջազգային տարածաշրջանային խոշոր նորարարական ծրագրերում կամ համագործակցելով այն երկրների հետ, որոնք ներգրավված են դրանցում: Կլաստերային զարգացման շարժիչ ուժը պետք է հանդիսանա մասնավոր հատվածը, սակայն գործուն աջակցություն պետք է ցուցաբերվի պետության կողմից: Պետության դերը կլաստերի ստեղծման հնարավորությունների բացահայտման, բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման, կազմակերպման և աշխատանքների համակարգման մեջ է: Կլաստերների ձևավորումը հնարավորություն կտա բարձրացնելու դրանցում ներգրավված ընկերությունների մրցունակությունը, խթանելու գիտություն-արտադրություն կապի ստեղծումն ու կատարելագործումը:

« Երբին շուկան բավական փոքր է, և մենաշնորհներն իրենց հսկայական չափերով (ինչպես դրանք սահմանում կամ հասկանում ենք) աչքի չեն ընկնում, ինչը նույնպես խոչընդոտում է մրցունակության բարձրացմանը: Այն, որ « տնտեսությունում մենաշնորհ և գերիշխող դեր ունեցող տնտեսավարող սուբյեկտները հիմնականում դեր են խաղում մի շարք ապրանքային շուկաներում, պայմանավորված է շուկայի ենթակառուցվածքների անկատարությամբ և թերզարգացվածությամբ: Դա, իր հերթին, խոչընդոտում է ապրանքարտադրողների մրցակցությանը ինտեգրացված ազգային շուկաներում: Առաջարկում ենք շուկայական կառուցվածքի այդ անկատարությունը հաղթահարել ոչ այնքան հակամենաշնորհային քաղաքականության միջոցառումներով, որքան մրցակցության խթանմամբ, նոր ձեռնարկությունների կազմավորմանն անհրաժեշտ կապիտալի արդյունավետ շուկայի ստեղծմամբ, ձեռնարկությունների նեղ առարկայական մասնագիտացման վերացմամբ, երկրում և դրա սահմաններից դուրս կապիտալի, ռեսուրսների և ապրանքների ազատ շարժը սահմանափակող վարչական բոլոր կարգի որոշումների վերանայմամբ:

Ինչ վերաբերում է « հանքարդյունաբերության ոլորտին, ապա նախ նշենք, որ, « լեռնահանքային արդյունաբերության առանձնահատկություններով պայմանավորված, այս ոլորտում պետական արդյունաբերական քաղաքականության մշակումն ու իրագործումը պետք է տարբերվեն արդյունաբերության այլ ճյուղերում կիրառվող նմանատիպ գործընթացներից: Այդ առանձնահատկություններից հիմնականն այն է, որ «-ում ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որ կարող է տրվել օգտագործման իրավունքով, և սեփականաշնորհման ենթակա չէ: Ընդերքի տեղամասերը չեն կարող առք ու վաճառքի առարկա լինել կամ օտարվել այլ ձևով:

Հանքարդյունաբերության ճյուղի նշված ներուժի իրացման և հետևաբար՝ ողջ տնտեսության զարգացումն ապահովելու գործում առկա են բազմաթիվ հիմնահարցեր, որոնց լուծման մեջ անչափ մեծ է պետության դերը:

Գունավոր մետալուրգիայի մի քանի՝ ժամանակակից պահանջներին համապատասխանող խոշոր ձեռնարկությունների ստեղծումը բարձր կապիտալատարությամբ է, օբյեկտիվորեն անհնար է իրագործել ինչպես « Կառավարության, այնպես էլ « գործարար աշխարհի այժմյան հնարավորություններով: Այդ պատճառով, կարծում ենք, « Կառավարությունը պետք է ջանքեր ներդնի՝ արտասահմանյան շահագրգիռ ֆիրմաներին, իրենց գիտատեխնիկական և ֆինանսական հնարավորություններով հանդերձ, ներգրավելու այս գործընթացի մեջ:

Կարևորագույն հիմնախնդիրներից մեկն էլ հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների արդյունավետ կառավարումն է, որի նպատակն է հաջողությամբ հաղթահարել կարճաժամկետ հեռանկարում միջազգային շուկաներում հնարավոր գնային բացասական ցնցումները և երկարաժամկետ հեռանկարում թույլ չտալ տնտեսության և կենսամակարդակի անկում, երբ պաշարներն ամբողջությամբ կամ զգալիորեն կսպառվեն: Ըստ էության, այս հիմնախնդիրը ներկայացնում է սպառման և ինվեստիցիաների ճիշտ հարաբերակցության ընտրության անհրաժեշտություն: Աշխարհում շատ տարածված է նաև այն տեսակետը, թե թույլատրելի չէ, որ ներկայիս սերունդը ամբողջությամբ արդյունահանի տվյալ երկրի բոլոր հանքային պաշարները՝ դրանով իսկ զրկելով գալիք սերունդներին հանքարդյունաբերությամբ զբաղվելու հեռանկարից: Այդ պատճառով եթե ներկայիս սերունդն օգտագործում է եկամուտները, ստեղծելով արդյունավետ կապիտալ, ապա դա օգտակար է նաև ապագա սերունդների համար: Կասկածից վեր է, որ ապագա սերունդները կունենան առավել կատարելագործված և արդյունավետ տեխնոլոգիաներ՝ մասամբ զարգացրած նախորդ սերունդների մտավոր կապիտալի հիման վրա և ի վիճակի կլինեն նաև բացահայտելու շատ այլ հանքահումքեր և զբաղվելու առավել արդյունավետ գործունեությամբ, որոնց գոյության մասին ներկայիս սերունդը նույնիսկ տեսլակ էլ չէ:

Հետևաբար՝ հանքահումքային արտադրանքից ստացված եկամուտների մի զգալի մասը պետք է օգտագործվի արդյունավետ՝ տնտեսության հիմքերը զարգացնելու համար: Այսինքն՝ բնական հումքային պաշարները պետք է փոխարինել երկարաժամկետ ակտիվներով՝ կենսունակ տեխնոլոգիաներ, ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքներ, ինչպես նաև մարդկային կապիտալ: Որպես կենսունակ և երկարաժամկետ ռազմավարություն՝ անհրաժեշտ է անցում կատարել չվերականգնվող հանքարդյունաբերության եկամուտների տնտեսական կախվածությունից դեպի բազմազանեցված այլընտրանքային ոլորտներ:

«Ը լեռնահանքային ձեռնարկությունների ներդրումային գրավչության բարձրացման և այս ոլորտում ձեռնարկատիրության հեռանկարային զարգացման ապահովման հարցում չափազանց մեծ նշանակություն ունի ճշգրիտ և ճկուն հարկային քաղաքականության վարումը: Դա բավականին լուրջ խնդիր է, քանի որ այս ոլորտի հանդեպ պետությունը երկակի ֆիսկալ դեր է կատարում՝ միաժամանակ հանդես գալով որպես բարձրագույն հարկային իշխանություն և բնական ռեսուրսների սեփականատեր: Այս երկակիությունը ճշգրիտ արտացոլող հարկային համակարգը պետք է համատեղի պետության կողմից իրեն պատկանող ռեսուրսների շահագործումից համապատասխան եկամուտների ստացումը և հնարավոր ներդրողների խթանման նպատակով՝ լեռնահանքային արդյունաբերության մեջ ներդրումային նախագծերի տնտեսական արդյունավետության ապահովումը: Այս ոլորտում հարկային համակարգի գլխավոր խնդիրը պետք է լինի պետության կողմից բնական ռեսուրսների դիմաց ստացվող եկամուտների այնպիսի բաշխումը, որը կնպաստի կայուն տնտեսական աճին և լեռնահանքային ձեռնարկությունների կողմից երկարաժամկետ շահույթի ստացմանը:

Շատ երկրներում բնօգտագործման վճարը կիրառվում է ռոյալթիի հետ մեկտեղ, որտեղ բնօգտագործման վճարը համարվում է ռեսուրսի օգտագործման վճար, իսկ ռոյալ-

թին՝ գերշահույթներ ապահովող ոլորտից վճարվող լրացուցիչ հարկատեսակ: Հետևաբար՝ ռոյալթիները պետք է ոչ թե փոխարինեն բնօգտագործման վճարներին, այլ լրացնեն, առնվազն առաջիկա տարիների համար այս երկու վճարատեսակները պետք է հանդես գան միասին, բնօգտագործման վճարների դրույքաչափերը պետք է հիմնված լինեն ռեսուրսների շուկայական գների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ էկոլոգատնտեսական հաշվարկների վրա, իսկ բնապահպանական վճարների դրույքաչափերը պետք է հիմնված լինեն շրջակա միջավայրին, մարդու առողջությանը հասցված իրական վնասի գնահատման վրա:

Բնապահպանական բազմաթիվ խնդիրներից կարելի է նշել նաև այն, որ բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի շարունակաբար համալրվելու պայմաններում չեն կատարվում խախտված հողերի վերականգնման աշխատանքներ, ինչի համար չկան արդյունահանողին պարտադրելու լծակներ: Հակասական է նաև արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տնօրինման հարցը: Այն դեպքում, երբ վիճելի է դրանց մի մասի հետագա շահավետ օգտագործման հնարավորությունը, դրանք սպառնում են հարակից համայնքների բնակչության անվտանգությանն ու առողջությանը:

Հանքարդյունաբերության թափոնները պետք է դասակարգվեն և մտցվեն հարկման դաշտ՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ և հանդիսանալով ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործիք:

Բացի այդ, աշխարհում առաջատար շատ հանքարդյունաբերական ընկերություններ գործադրում են ISO 14001 ստանդարտի⁴ վրա հիմնված հանքարդյունաբերության ոլորտին առանձնահատուկ բնապահպանական կառավարման համակարգեր (ԲԿՀ): ԲԿՀ-ը հնարավորու-

⁴ ISO 14000 – Environmental Management; *International Organization for Standardization*; http://www.iso.org/iso/iso_catalogue/management_and_leadership_standards/environmental_management.htm

թյուն են տալիս համակարգված կերպով բացահայտելու ու ըստ առաջնահերթության դասակարգելու բնապահպանական հատկանիշներն ու ազդեցությունները, ներառյալ՝ չկարգավորվող ուղղություններում: Դրանք նաև թույլ են տալիս ավելի շատ հաշվի առնել չբնորոշված կամ չնախատեսված պայմանները, որ կարող են առաջ գալ հանքավայրում՝ խրախուսելով արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը և հնարավոր չնախատեսված պայմանների փորձարկումները:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հստակ, հասցեական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը կենսական նշանակություն կունենան ոլորտի ձեռնարկությունների զարգացման համար՝ ազատ շուկայական տնտեսության պահանջներին դեռևս լիարժեքորեն չհամապատասխանող ներդրումային միջավայրի և ոչ լիարժեքորեն կայացած ֆինանսական շուկայի պայմաններում: Ընդ որում, այս ոլորտում պետական արդյունաբերական քաղաքականությունը պետք է այնպես մշակվի, որ ապահովվեն ինչպես ձեռնարկությունների վերականգնումն ու ընդլայնումը, այնպես էլ դրանց հեռանկարային զարգացումը:

Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունը գործում է համաշխարհային շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: Ուստի ներկա փուլում լեռնահանքային ճյուղի նկատմամբ պետական քաղաքականության կարևորագույն ուղղություն պետք է լինի ճյուղի ձեռնարկությունների աշխատանքի համար այնպիսի ընդհանուր պայմանների ստեղծումը, որոնք առնվազն կհամապատասխանեն մետաղների համաշխարհային շուկայի խոշորագույն մասնակից երկրներում գոյություն ունեցող պայմաններին: Մեր երկրի լեռնահանքային արդյունաբերության վերականգնման և կայուն զարգացման ապահովման նպատակով մեծածավալ երկարաժամկետ կապիտալ ներդրումներ են պահանջվում, բայց, միևնույն ժամանակ, այս ոլորտում առկա են նաև բազմաթիվ ռիսկեր՝ պայմանավորված երկրաբանական, տեխնոլոգիական և շուկայական գործոններով,

որոնք պետք է հաշվի առնվեն ճյուղի նկատմամբ վարվող պետական քաղաքականության մեջ: Այս առումով, ճյուղի ձեռնարկությունների նկատմամբ վարվող հարկային, մաքսային քաղաքականությունների մշակման հիմքում պետք է դրվեն այդ ռիսկերը փոխհատուցող կամ գոնե հաշվի առնող մեխանիզմներ, քանի որ որոշ ձեռնարկություններ, ոչ իրենց մեղքով, կարող են հայտնվել այնպիսի պայմաններում, որ վտանգեն նույնիսկ հետագա գործունեությունը:

ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտի պետական արդյունաբերական քաղաքականությունը պետք է նախատեսի ճյուղի տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացմանն ուղղված վարկային ծրագրերի մշակում և իրագործում, տեղեկատվական կենտրոնի ստեղծման աջակցություն, լեռնահանքային ձեռնարկությունների և հարակից ճյուղերի ձեռնարկությունների միջև համագործակցության սերտացում (ճյուղային և տարածաշրջանային համաժողովների կազմակերպմամբ և ֆինանսավորմամբ), ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության և հանքարդյունահանման նպատակով ընդերքի տեղամասերի տրամադրման ընթացակարգերի պարզեցում ու այդ գործընթացի արդյունավետության բարձրացում:

2. ՃՇՊՐԻՏ ԾԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մեր երկրի արդյունաբերական քաղաքականությանն անդրադառնալիս նշվել է, որ առաջիկա տարիների (մինչև 2020 թ.) համար գործադիր իշխանությունն ընդունել է ճյուղային ռազմավարություններ՝ որոշ ոլորտներ զարգացնելու հստակ հեռանկարներով: Մասնավորապես, խոսքը ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կենսատեխնոլոգիաների, կոնյակագործության ոլորտների մասին է:

Առաջին՝ մեկնարկային փուլում զարգացվում են արդյունաբերության երեք ճյուղեր՝ կոնյակագործություն, դեղագործություն, ճշգրիտ ճարտարագիտություն: Էկոնոմիկայի նախարարության մշակած ռազմավարությունը թույլ կտա մեծացնել տնտեսության արտահանելի մասը. առևտրի և ՀՆԱ հարաբերակցությունը: Նախատեսված է, որ ընդհանուր արտահանման ծավալը 2011-ի 1.1 մլրդ-ի դիմաց 2020-ին կլինի 2.8-3.3 մլրդ, ապրանքների արտահանման ծավալներն ըստ ապրանքահումքային ռեսուրսների՝ 2008-ի 385 մլն-ի դիմաց, 2015-ին՝ 700-900 մլն, 2020-ին՝ 1.5 մլրդ:

Ճշգրիտ ճարտարագիտություն ոլորտի կարևոր վիճակագրությունը 2011 թ. դրությամբ հետևյալն է՝

- ձեռնարկությունների քանակը՝ 60-70,
- աշխատատեղերի քանակը՝ 4,000,
- համախառն իրացումը (2010)՝ 35 մլն ԱՄՆ դոլար,
- արտահանման ծավալները (2010)՝ 17 մլն ԱՄՆ դոլար,
- արտահանման ծավալների տարեկան միջին աճը (2003/2008)՝ 10%:

Մի կողմից, ճարտարագիտական գործունեությունը մաս է կազմում արտադրական ընկերությունների հիմնական գործունեության, մյուս կողմից, այն սահմանակցում է տնտեսական գործունեության այլ տեսակների, ինչպիսին է օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը:

Ճարտարագիտական ծառայությունների շուկան գործում է ուրույն տրամաբանությամբ, որտեղ ձևավորված են մրցակցության հիմնական բիզնես-մոդելները: Ներկայումս ճարտարագիտական ծառայությունների բնագավառում տարածում գտած մրցակցության մոդելները կարելի է տարանջատել հինգ տեսակի, որոնք միմյանցից տարբերվում են գնորդների/շուկաների հետ փոխհարաբերությունների ձևաչափով և այն յուրահատուկ արժեքային առաջարկով, որոնցով հանդես են գալիս տվյալ մոդելով գործող ընկերությունները.

1. հետազոտական և մշակումների կենտրոններ, վերազգային կորպորացիաներ,
2. ծառայությունների մատուցում արտապատվիրման շուկայում,
3. համալիր ծառայությունների մատուցում մասնագիտացված ընկերությունների կողմից,
4. համաշխարհային ընկերությունների տարածաշրջանային մասնաճյուղեր,
5. ճարտարագիտական ծառայությունների մատուցումը (օպորտունիստական (պատեհապաշտական) մոդել) արդյունաբերական ընկերությունների կողմից (հիմնականում՝ ոչ կանոնավոր):

Որպես մակրոմակարդակի տեսլական՝ ճարտարագիտական ծառայությունների ոլորտի զարգացումը հնարավոր է երկու զուգահեռ ուղղություններով: Առաջին ուղղությունը շեշտադրում է տեղական գործունեների վրա հիմնված զարգացումը, իսկ երկրորդը՝ արտաքին շուկաներից բխող գործունեների ազդեցությունը:

Ճարտարագիտական ծառայությունների ոլորտը բավականին ընդարձակ է և սերտորեն միահյուսված տնտեսական գործունեության մի շարք այլ ոլորտների: Մի կողմից՝ ճարտարագիտական գործունեությունը մաս է կազմում արտադրական ընկերությունների հիմնական գործունեության, մյուս կողմից՝ սահմանակցում է տնտեսական այլ գործունեության տեսակների, օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների: Մասնավորապես՝ էլեկտրոնային տվյալների ավտոմատացման բնագավառը (Electronic Data Automation - EDA), որ ներառում է միկրոսխեմաների մշակման ծրագ-

րային փաթեթներ ու նախագծում, և SS ու ճարտարագիտական ծառայությունները հանդես են գալիս համակցված՝ գործնականում անհնար դարձնելով դրանց տարանջատումը: Ոլորտի վերաբերյալ սահմանումները հիմնականում տրվել են տնտեսական գործունեության դասակարգիչներում (NAISIS, NACE, ISIC) և օգտագործվում են ազգային և միջազգային վիճակագրական ծառայությունների կողմից: Դրանք որպես հիմք են ընդունում նաև տարբեր միջազգային կազմակերպություններ և հետազոտական ինստիտուտներ, սակայն որոշ դեպքերում, ելնելով հետազոտության նպատակներից, ուսումնասիրողներն ընդլայնում կամ սահմանափակում են ոլորտը՝ փոփոխելով ներառվող գործունեության տեսակները:

Լայն սահմանմամբ՝ ճարտարագիտական են այն բոլոր ծառայությունները, որոնք կիրառում են ֆիզիկայի օրենքները և ճարտարագիտական մոտեցումները սարքավորումների, նյութերի, գործիքների, գործընթացների և համակարգերի նախագծման, մշակման և կիրառման համար: Այս ոլորտում ծառայությունները ներառում են խորհրդատվությունը, իրագործելիության վերլուծությունը, նախնական և վերջնական նախագծման իրականացումը, շինարարության կամ ճարտարագիտական լուծումը ներդնելու ժամանակ տեխնիկական ծառայությունների տրամադրումը, ճարտարագիտական նախագծերի վերահսկումը և մշտադիտարկումը: Որոշ միջազգային հետազոտություններ ճարտարագիտական ծառայությունների ոլորտի ուսումնասիրության ընթացքում շուկայի սահմանման մեջ են մտցնում նաև ճարտարապետական ծառայությունները՝ շենքերի նախագծումը:

Ոլորտի սահմանումը տարբերվում է նաև ըստ միջազգային վիճակագրական դասակարգման չափորոշիչների:

Ամերիկայում կիրառվող Հյուսիսային Ամերիկայի արդյունաբերության դասակարգման համակարգը (NAICS) ճարտարագիտական ծառայություններից բացառում է աշխարհագրական հետախուզումն ու քարտեզագրումը (բացի աշխարհաֆիզիկականից), համակարգիչների մշակումն ու ծրագրային ապահովումը, արդյունաբերական մշակումը, շրջակա միջավայրի խորհրդատվական ծառայությունը: Այս դասակարգումից դուրս են մնում նաև շենքերի, շինությունների, ճանապարհների և այլ կառույցների նախագծումն ու շինարարությունը:

Մեր երկրում ճարտարագիտական ծառայությունների ոլորտում առավել ընդգրկուն նախաձեռնությունն իրականացրել է ԱՄՆ-ի ՄՋԳ մրցունակ մասնավոր հատվածը Հայաստանում (CAPS) ծրագիրը:

Ըստ ընկերությունների ղեկավարների՝ Հայաստանի ճարտարագիտական ծառայությունների ոլորտում առկա խնդիրները բազմաթիվ են և խորքային: Բարձրորակ ճարտարագետ մասնագետների թողարկումը նշված խնդիրներից ամենակարևորն է: Ծարտարագիտական կրթության նախկին ուժեղ ավանդույթների վատնումը մեծ վտանգ է ոլորտի հետագա զարգացման համար: Այն չի ապահովում սերնդափոխություն, որի հետևանքով ոլորտի մարդկային ռեսուրսների քանակը կարող է խիստ կրճատվել մի քանի տարի անց: Ֆինանսավորման աղբյուրների բացակայությունը ևս մեծապես սահմանափակում է ընկերությունների գործունեությունը: Բանկային վարկերի անհասանելիության պատճառով ընկերությունները դժվարանում են ընդլայնել ծառայությունների շրջանակը կամ փորձել արտահանման շուկաներում ներկայացնել իրենց ապրանքները: Պետական աջակցության մակարդակը և կարգավորող դաշտի գործունեությունը, ընկերությունների ղեկավարների կարծիքով, ոլորտի ամենախնդրահարույց բնագավառներն են: Նրանց բնորոշմամբ՝ ճնշող են թե՛ հարկային, թե՛ օրենսդրական դաշտը և թե՛ արտահանման ու ներմուծման կարգավորումները: Ծարտարագիտական ծառայությունների ազգային ռազմավարության բացակայությունը ևս ոլորտի զարգացման խոչընդոտներից է: Ընկերություններից շատերի կարծիքով՝ ոլորտը ոչ միայն չի արժանանում պետության աջակցությանը, այլև առհասարակ անուշադրության է մատնված:

2010 թ. գարնանը Եռաչափ մոդելավորման միության կողմից ինժեներական ընկերությունների ուղեցույցի պատրաստման ընթացքում կատարված հարցումները ակնառու կերպով ցույց տվեցին հայկական ինժեներական հատվածի խոցելի կողմերից մեկը՝ պասիվ շուկայավարման քաղաքականությունը հատկապես նոր և բազմազան շուկաներ որոնելու գործում: Պատճառներից էր նաև ընկերությունների անբավարար տեղեկացվածությունը եվրոպական շուկայի առանձնահատկություններին և հնարավորություններին:

րին, ինչպես նաև համապատասխան գովազդային նյութերի պակասը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Եռաչափ մոդելավորման միությունը (PUM), «Նիդեռլանդների ավագ փորձագետներ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի միջոցով և USAID/CAPS ծրագրի օժանդակությամբ, նախաձեռնեց պիլոտային ծրագիր՝ հրավիրելով ինժեներական հատվածում հմտացած եվրոպացի շուկայագետի՝ հայաստանյան ընկերությունների հետ աշխատելու: Նպատակն էր բացահայտել հայաստանյան ինժեներական ընկերությունների շուկայավարման կարողությունները, եվրոպական շուկայում հայկական ընկերությունների հնարավորությունները, շուկայավարման բացերը և դրանց լրացմանն անհրաժեշտ հետազաքայլերը:

Ծրագրին մասնակցեց 5 ընկերություն՝ Հիդրոէներգետիկա (Hydroenergetica), A2, Ինդուստրիալ տեխնոլոգիաներ (Industrial Technologies Co.), Գեներգո (Genago), Սայմոտեկ (Symotec):

Ծրագիրը բաղկացած էր 2 փուլից՝ աշխատանք ինժեներական ընկերությունների հետ Հայաստանում և եվրոպական գործընկերների որոնում Հոլանդիա վերադառնալուց հետո:

Առաջին փուլում հրավիրված փորձագետը ներկայացրեց եվրոպական ինժեներական շուկան, դրա յուրահատկությունները, այդ շուկա մտնելու հնարավորությունները, դժվարությունները, նման հավակնություններ ունեցող ընկերությունների առջև դրված պահանջները:

Ծրագրի երկրորդ՝ եվրոպական գործընկերների որոնման փուլը, իրականացվելու է Հայաստանից դուրս: Փորձագետը գտնելու է ձեռնարկությունների համար համապատասխան գործընկերներ, որոնց հետ կհաստատվեն փոխգործակցական կապեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաներին հովանավորելու պատրաստակամություն հայտնելով՝ կառավարությունը չպետք է մոռանա ինժեներական հատվածի մասին, որն ավելի մեծ ներուժ ունի: Ինժեներական ծառայություններն ավելի թանկ են, այդ իսկ պատճառով՝ ոչ այնքան պահանջված, սակայն դրանք ներառում են համապարփակ արտադրանք՝ և՛ ինժեներական, և՛ ՏՏ լուծումներ:

Լավ է, որ USAID/CAPS-ը հատուկ ուշադրության արժանացրեց ինժեներական ոլորտը, արդեն մեկ տարուց ավելի է՝ կայուն և արդյունավետ համագործակցություն է հաստատվել, ինչի շնորհիվ առաջադրված բոլոր խնդիրները հնարավորինս արդյունավետ լուծում են ստանում:

Եռաչափ մոդելավորման միությունը, ԱՄՆ-ի ՄԶԳ ֆինանսավորմամբ «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) ծրագրի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի աջակցությամբ, իրականացրել է Հայաստանի ինժեներական հատվածի ուսումնասիրություն և դրա հիման վրա ոլորտի մասնագետների համար ստեղծել երկլեզու էլեկտրոնային ուղեցույց (ինժեներական քլաստերի օնլայն ուղեցույց), որը միավորում է ինժեներական ոլորտը՝ այն դարձնելով առավել համակարգված ու կազմակերպված:

Ուղեցույցի պատրաստման ընթացքում միությունն իրականացրել է երկփուլ հետազոտություն ինժեներական ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության հիմնական ուղղությունները պարզելու և ամբողջ ոլորտը համակարգելու նպատակով: Հարցմանը մասնակցել է 54 ընկերություն: Մասնագետների գնահատմամբ՝ հետազոտությունը հնարավորություն է տալիս հատկորոշել ինժեներական ոլորտի հիմնախնդիրները՝ սկսած կրթական հատվածից, մասնագետների ընտրությունից, սերտիֆիկացումից մինչև արտադրանքի վերջնական իրացման հարցերը: Ունենալով հմուտ և տաղանդավոր մասնագետներ՝ հայկական ինժեներական ընկերությունները՝ դեռևս լիովին չեն իրացնում այս ոլորտի ընձեռած լայն հնարավորությունները՝ թե՛ նոր արտադրանք առաջարկելու, թե՛ նոր շուկաներ գրավելու և թե՛ մրցունակության մակարդակը բարձրացնելու առումներով: Այս ուղեցույցը նոր թափ կհաղորդի ամբողջ ոլորտի գործունեությանը, հնարավորություն կտա արագ և արդյունավետ կապեր հաստատելու տեղական և օտարերկրյա պատվիրատուների հետ՝ գտնելու գործընկերներ, ձեռք բերելու նոր հմտություններ և դառնալու մրցունակ՝ որպես աշխարհի ինժեներական հանրության անդամ:

Եզրակացություն

Մինչև 2020 թ. մեր երկրի արտահանման ներուժի իրացման հեռանկարային ուղղությունների շարքում դերակատարում ունեն բիոտեխնոլոգիաները, դեղագործությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս ճյուղերն ուղղակիորեն կապված են «բարձր» և «գիտատար» տեխնոլոգիաների հասկացության հետ, ինչը ևս մեկ անգամ հաստատում է, որ երկրի մրցունակությունը հենց այդպիսի տեխնոլոգիաների և արտադրության ճանապարհով կարելի է բարձրացնել:

«< տնտեսական ռազմավարության առաջնահերթ ուղղություններից մեկը տնտեսության արդյունաբերական հատվածի զարգացումն է հետևյալ շեշտադրությամբ՝ հայկական արտադրանքի մրցունակության բարձրացումը համաշխարհային շուկայում, արտահանման բազմազանեցումը, ՀՆԱ-ում արտահանման չափաբաժնի մեծացումը, գիտատար արտադրության զարգացումը:

Բարձրարժեք արտադրանքի (գիտատար, բարձր-տեխնոլոգիական հատվածի ապրանքներ) արտադրության շեշտադրման գործում հայկական ապրանքների արտահանման գրավչությունը էականորեն նվազեցնում է տրանսպորտային բարձր ծախսերի գործոնը:

Սպառողին գրավելու համար, մրցակցության խստացման պայմաններում, գերակայության հասնում են այն արտադրողները, որոնք ներդնում են նորամուծություններ: Գլոբալ տեղեկացվածությունը դառնում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի որոշիչը՝ նպաստելով նոր՝ գիտելիքահեռ տնտեսության ձևավորմանը: Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունների հիմնական նպատակը՝ շահույթի ստացումը և դրա մեծացումը, հանգեցնում են իրացման ծավալների ավելացմանը, որն էլ, իր հերթին, պայմանավորված է ձեռնարկության՝ շուկայում ներկայացրած ապրանքի մրցունակությամբ:

Ներկայումս ինչպես առաջատար, այնպես էլ զարգացող երկրների առանցքային խնդիրն է տնտեսության մրցունակության բարձրացումը:

Նորամուծական ձեռնարկատիրության զարգացման գործում պետության դերի բարձրացումն օբյեկտիվորեն անհրաժեշտ գործընթաց է, քանի որ այստեղ առկա են այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծումը, շատ հաճախ, վեր է շուկայական հարաբերությունների ինքնակարգավորվող համակարգի հնարավորություններից: Այս իմաստով, նպատակահարմար է, որ պետությունն ակտիվ նորարարական քաղաքականության իրականացմամբ ստեղծի նորամուծական ձեռնարկատիրության զարգացմանն անհրաժեշտ նպաստավոր տնտեսական ու սոցիալ-քաղաքական միջավայր, ենթակառուցվածքներ, ինչը թույլ կտա էականորեն բարելավել ազգային տնտեսության նորարարական ոլորտի ներդրումային միջավայրը և հասարակության տրամադրության տակ եղած տնտեսական ռեսուրսներն ուղղել երկրում նորամուծական ձեռնարկատիրության զարգացման մակարդակի բարձրացմանը:

Ավելացել է ճարտարագիտության, համակարգերի մշակման և գիտահետազոտական ծառայությունների ոլորտում մասնագիտացող ընկերությունների թիվը: Որպես նոր, հեռանկարային մասնագիտացում, սկսել է զարգանալ մոբայլ լուծումների մշակումը: Այս միտումը բարենպաստ է հատկապես տեղական ընկերությունների համար, որոնք այժմ ներգրավված են նաև միկրոսխեմաների նախագծման և համակարգերի ճարտարագիտության ոլորտներում: Չնայած ՏՏ ընկերությունների միայն 3%-ն է մասնագիտանում միկրոսխեմաների նախագծման ոլորտում, այնուհանդերձ, այս հատվածի հասույթը կազմում է ՏՏ ոլորտի ողջ շրջանառության մոտ 14%-ը:

Վերջին տարիներին մեր երկրի գիտատեխնիկական ներուժի առանձին բաղադրիչների կառուցվածքում նկատվում են որակական և քանակական բնույ-

թի մի շարք փոփոխություններ, որոնք մասնավորապես՝ դրսևորվում են ստորև ներկայացված միտումներում. կրճատվել է գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների թվաքանակը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների մեծ մասն ունի բարձրագույն կրթություն, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների ընդհանուր թվաքանակի կառուցվածքում աճել են մինչև 30 ու 60 և ավելի տարեկան գիտաշխատողների տեսակարար կշիռները՝ ի հաշիվ միջին տարիքի գիտաշխատողների տեսակարար կշիռների նվազման, գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր կառուցվածքում աճել է կիրառական հետազոտությունների տեսակարար կշիռը՝ ի հաշիվ հիմնարար հետազոտությունների, գիտատեխնիկական մշակումների և գիտատեխնիկական ծառայությունների տեսակարար կշիռների նվազման:

Արևային էներգիայի օգտագործումը ՀՀ համար ունի ռազմավարական նշանակություն, այն պահի հրամայականն է ու ժամանակամետ:

Հայաստանի տարածքը մոտ է հասարակածային գոտուն, և հանրապետության շրջանների զգալի մասն ունի բարենպաստ բնակլիմայական պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս լայնորեն օգտագործելու արևի էներգիան:

Ուստի «Տրանզիստոր-Պլյուս» ՍՊԸ-ն առաջիկա տարիներին, վերը նշված առավելություններով, արդյունավետ կերպով համակցելով իր արտադրական և մտավոր ներուժը, ունի զգալի ներուժ արտադրանքի անվանացանկն ընդլայնելու և առավել գրավիչ ներդրումային միջավայր ձևավորելու համար: Առաջարկում ենք, որ «Տրանզիստոր-Պլյուս» ՍՊԸ-ն համագործակցի խոշոր ֆերմերների հետ, ինչը, անխոս, երկուստեք շահավետ կլինի թե՛ ընկերության, թե՛ վերջիններիս համար. սա էլ, իր հերթին, կհանգեցնի ըն-

կերության գործունեության արդյունավետ կազմակերպմանը: Բացի այդ, «Տրանզիստոր-Պլյուս» ՍՊԸ-ում կգոյանան հավելյալ ֆինանսական միջոցներ, ինչը հնարավորություն կընձեռի՝ վերջինիս կողմից արդեն իսկ իրականացված նորամուծական նախագծերը կյանքի կոչելու:

Առաջարկում ենք՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ֆինանսավորման ծավալների աճին զուգընթաց, աստիճանաբար ավելացնել բազային և նպատակային-ծրագրային ֆինանսավորման ծավալների տեսակարար կշիռները՝ ի հաշիվ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծավալների տեսակարար կշիռի կրճատման:
- Նորամուծական ձեռնարկատիրության զարգացման համար լուծել հետևյալ հիմնախնդիրները. ազգային տնտեսության տեխնոլոգիական հիմքի կատարելագործում և վերագինում, տնտեսավարող սուբյեկտների նորամուծական ակտիվության բարձրացում, նորարարական ձեռնարկության շահերի պաշտպանություն:
- Նորարարական ոլորտին ցուցաբերվող պետական աջակցությունը կազմակերպել ստորև ներկայացված ուղիներով:

Ծրագրվում է Հայաստանում՝ «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքներում ստեղծել երկու ազատ տնտեսական գոտի՝ արդյունաբերաարտադրական և տեխնիկակիրառական, «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ի (կազմակերպիչ) ընդհանուր ղեկավարությամբ: «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի հիմքի վրա ստեղծվող ԱՏԳ-ի համար առաջարկվող գլոբալ ուղղվածություն է բարձր գիտատար տեխնոլոգիաների և արտադրության (High Tech) զարգացումը, իսկ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ստեղծվող ԱՏԳ-ի համար՝ նորարարությունների, գիտահետազոտական և փորձարարական ստորուկտորային աշխատանքների (R&D) և ՏՏ (IT) զարգացումը:

Համաշխարհային բանկի տվյալներով՝ գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտահանումը Հայաստանից 2009 թ. կազմել է ամբողջ արտահանվող արտադրանքի ընդամենը 3,7%-ը: Տարածքով համեմատելի այլ երկրների համանման ցուցանիշները կազմել են. Սինգապուր՝ 49%, Իսրայել՝ 23%, Լիբանան՝ 7,2%, Դոմինիկյան Հանրապետություն՝ 5,4%, Սլովակիա՝ 5,3%, Սլովենիա՝ 6,5%, Էստոնիա՝ 10%, Վրաստան՝ 2,68% (այս երկրի վերաբերյալ՝ ըստ 2008 թ. տվյալների): Անխոս, Հայաստանն ունի մի շարք օբյեկտիվ մրցակցային սահմանափակումներ, այդ թվում՝ նավահանգիստների բացակայություն, փակ սահմաններ հարևան երկրների հետ, տրանսպորտային մեծ ծախսեր: Սակայն, առանձին դեպքերում, այդ սահմանափակումները կարելի է օգտագործել սեփական մրցունակության բարձրացման համար: Այս դեպքում ապրանքների /ծառայությունների բարձրարժեք արտադրությունը այն ռազմավարական առաջնայնությունն է, որին անհրաժեշտ է հետևել: Սա վերաբերում է մասնավորապես բարձր (գիտատար) տեխնոլոգիաների ոլորտի ապրանք/ծառայություններին, նորարարական լուծումներին:

Երկրի մրցակցային առավելությունների շարքը կարելի է դասել նաև հարմար աշխարհաքաղաքական դիրքը Ռուսաստանի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի միջև, որակավորված աշխատանքային ռեսուրսների առկայությունը, ավանդականորեն ուժեղ գիտական հիմքը:

Նորամուծական ձեռնարկարհրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին հարկման արտոնյալ պայմանների տրամադրում. ներկայումս համաշխարհային տնտեսությունում պետությունների միջև նկատվում է նաև սուր մրցակցություն այլ երկրներից կապիտալ ներդրումների ներգրավման համար տրամադրվող հարկային և այլ արտոնությունների ոլորտում: Արտոնությունների տրամադրումը հաջողության համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Դա

միայն առաջին քայլն է գոտու գրավչության ապահովման և օտարերկրյա կապիտալի ներհոսքի ուղղությանը: Հաջողության հասնելու համար անհրաժեշտ է լուծել նաև համատնտեսական, սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, գիտատեխնոլոգիական և այլ խնդիրներ:

Ելնելով այս նախադրյալներից, ՀՀ Կառավարությունը մտադիր է իրականացնել ակտիվ արդյունաբերական քաղաքականություն՝ տնտեսության արտահանման հատվածի ընդլայնմանը նպաստող: Նպատակն է Հայաստանում բարձրտեխնոլոգիական արտադրության և ծառայությունների աճը, աստիճանաբար անցումը ռեսուրսայինից գիտատար արտադրության:

Դիտարկենք հնարավոր արտոնությունները: Խոսքը ստանդարտ հարկային արտոնությունների մասին է, որոնց վերաբերում են.

ԱԱՀ-ից ազատում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրացման դեպքում: Այդպիսի աշխատանքներից են.

- Գոյություն ունեցող արտադրանքի և տեխնոլոգիաների կատարելագործում կամ նորերի ստեղծում (ճարտարագիտական օբյեկտի կամ տեխնիկական համակարգի ստեղծում, նոր տեխնոլոգիաների մշակում, մեքենաների, սարքավորումների, նյութերի փորձանմուշի ստեղծում, որոնք նախատեսված չեն երրորդ անձանց կողմից իրացման համար, գործողություններ, որոնք իրականացվում են կրթական հաստատությունների, գիտահետազոտական կազմակերպությունների կողմից՝ տնտեսական պայմանագրերի հիման վրա, ծրագրեր, որոնք իրականացվում են բյուջեյի միջոցներով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հատուկ հիմնադրամներով): Այս դեպքում հարկատուն կարող է հրաժարվել սահմանված արտոնություններից:
- Մտավոր գործունեության արդյունքների իրացման ԱԱՀ-ից ազատում (գյուտերի, հայտնագոր-

ծությունների, արդյունաբերական նմուշների, տվյալների բազայի, նոու-հաունների, ինչպես նաև լիցենզիոն պայմանագրերի վրա հիմնված մտավոր գործունեության արդյունքների իրացման իրավունքի վրա): Այս դեպքում հարկատուն չի կարող հրաժարվել նշված արտոնությունից:

- Նորարարական գործընթացի բոլոր փուլերում բուհերի, գիտական կազմակերպությունների, արդյունաբերական ձեռնարկությունների և պետական կառավարման մարմինների փոխհամագործակցության ակտիվացում, այսինքն՝ կրթական (բուհ, համալսարան) և տեխնոլոգիական (ԳՀԻ) կենտրոնների, որպես մտավոր ռեսուրսի մատակարարների, առկայություն (համատեղ արտադրական ծրագրեր, որակավորված կադրերի պատրաստում և այլն), նորամուծական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին պետական գիտահետազոտական ինստիտուտներում գիտատեխնիկական ռեսուրսների օգտագործման իրավունքի տրամադրում:

Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտում բավականաչափ անելիքներ կան:

- Բուհերը պետք է վերագինել ըստ համաշխարհային չափանիշների՝ պատրաստելու խոր մասնագիտացված աշխատուժ:
- Բարձր տեխնոլոգիաների արտադրանքների արտահանման պայմանները պետք է դարձնել ավելի դյուրին, որպեսզի խրախուսվի արտահանումը:
- Մասնագետների հավաստմամբ, ելնելով համաշխարհային փորձից, անընդհատ մրցունակ լինելու համար այս ոլորտում, որտեղ ամեն ինչ շատ արագ է զարգանում, պետք է նույնքան արագ բարելավել այն միջավայրը, որտեղ աշխատում և ստեղծագործում է ճշգրիտ ճարտարագետը:

Այսպիսով՝

- ստեղծել ճարտարագիտական կենտրոն,

- ներգրավել վերագային կորպորացիաների արտադրական գործընթացները,
- զարգացնել գիտատար և բարձրարժեք սարքավորումների արտադրությունը:

Ըստ ՀՀ կառավարության 2014 թ. բյուջետային ուղերձի՝ արդյունաբերական քաղաքականությունն ուղղված է լինելու բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծմանը:

Կշարունակվեն արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախանշված արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի՝ արդեն իսկ հաստատված ոլորտային ռազմավարությունների կատարումը (ճշգրիտ ճարտարագիտություն, կոնյակագործություն, գինեգործություն և դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ), ինչպես նաև մնացած ոլորտների առանձին ռազմավարությունների մշակումն ու իրականացումը (պահածոների, հյութերի, ջրերի արտադրություն): Կմեկնարկվեն ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության, ինչպես նաև թեթև արդյունաբերության ոլորտների զարգացման ռազմավարությունների գործողությունները:

Օրակարգում կմնան արտահանման խթանման գործիքակազմի կիրառումը և կատարելագործումը, նոր գործիքների ներդրումը՝ հասցեական և նպատակային օժանդակություն ցուցաբերելով զարգացման ծրագրեր իրականացնող ընկերություններին, ժամանակակից արտադրությունների կազմակերպման նպատակով իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցման քաղաքականությունը՝ նաև հարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

Ճյուղերի և ուղղությունների առանձնահատկություններից ելնելով՝ կկիրառվի արդյունաբերական քաղաքականության համապատասխան գործիքակազմ: Առավել բարձր ներուժ ունեցող ճյուղերում աշխատատեղերի ստեղծումը կիրականացվի հիմնականում մասնավոր հատվածի միջոցներով, իսկ պետու-

3. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

թյան կողմից իրականացվող քաղաքականությունը կուղղվի ֆինանսական ռեսուրսների մատչելիության, արտադրության և արտադրանքի որակի ապահովմանը և սերտիֆիկացման օժանդակությանը, արտադրության համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ներմուծման գործընթացների էական պարզեցմանը:

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում գիտատար և զանգվածային արտադրանք թողարկող նոր ճյուղերի զարգացումը և համապատասխան աշխատատեղերի ստեղծումը կիրականացվեն հիմնականում վերջիններիս արտադրանքի արտահանման առաջանցիկ աճի պայմաններում, ինչպես նաև հատուկ հարկային և մաքսային ռեժիմների սահմանմամբ:

«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի համար ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 569.7 մլն դրամ՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով հաստատված 463.7 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ»՝ 375.0 մլն դրամ,
2. «Արդյունաբերության զարգացմանն աջակցության ծրագրերի կառավարում և համակարգում»՝ 194.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տնտեսական աճի նոր շարժիչ ուղորտների ձևավորումը՝ ի հաշիվ ներկայում արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Այս համատեքստում առաձևահատուկ կարևորվում է արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների կարողությունների զարգացումը և արտաքին տնտեսական գործունեության մեջ վերջիններիս ներգրավման աջակցությունը:

Քիմիական արդյունաբերության ճյուղը հիմնականում ներկայացված է ներկերի և լաքերի, դեղագործական, ռետինե ու պլաստմասսայե լվացող ու մաքրող, այլ քիմիական նյութերի արտադրություններով, որոնց մասնաբաժինները ընդհանուր ճյուղի կառուցվածքում կազմում են համապատասխանաբար՝ 37,4%, 18,3%, 29,4% և 4%:

2010 թ. քիմիական արդյունաբերության արտադրանքի մասնաբաժինը հանրապետության ամբողջ արդյունաբերության կառուցվածքում կազմել է 1.6%⁵:

Մեծ քիմիայի հիմնական քարշակ ձեռնարկություններն են «Նաիրիտ գործարան» և Վանաձորի «Պրոմթեյ-Խիմպրոմ» ընկերությունները, որոնց արտադրության կազմակերպման տարաբնույթ խնդիրները պետության ուշադրության կենտրոնում են:

Ոլորտում գործում են մի շարք ընկերություններ ևս, որոնք արտադրում են բարձր որակի շինանյութեր, այդ թվում՝ ներկեր, լաքեր, էմուլսիաներ, լուծիչներ, լվացող միջոցներ և այլն: Նշված ձեռնարկություններից են՝ «Շեն կոնցեռն», «Քրաուն Քեմիքալ», «Կենցաղքիմ», «Լաքերի ու ներկերի գործարան» և այլ ընկերություններ:

Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության շարժընթացը քիմիական արդյունաբերությունում 2007-2011 թվականներին հետևյալն է՝

Աղյուսակ 3

Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության ծավալը 2007-2011 թվականներին⁶

Քիմիական նյութի անվանումը	2007	2008	2009	2010	2011
Սինթետիկ կաուչուկ, տ	8058	5414	1949	1083	-
Կաուստիկ սոդա, տ	5484	4476	1138	960	63
Լաքաներկանյութեր, տ	7189	9387	10893	11187	11607
Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ, տ	2804	2263	2335	2335	2112
Տնտեսական օճառ, տ	31	1	-	-	2.3
Ձեռքի օճառ, տ	26	8	50	81	93

⁵ <http://www.mineconomy.am/arm/1/text.html>

⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012:

Աղյուսակ 3-ից կարելի է եզրակացնել, որ 2007-2011 թվականներին քիմիական արտադրությունում կայուն աճի միտում է գրանցվել միայն լաքաներկանյութերի արտադրությունում, 2011 թվականին, 2007 թվականի համեմատությամբ, արտադրությունն ավելացել է 61 տոկոսով: Ձեռքի օճառի արտադրությունում նույնպես աճ է գրանցվել 2007 թվականի նկատմամբ՝ ավելի քան 257 տոկոս, սա վկայում է այն մասին, որ ձեռքի օճառի արտադրությունն ավելի արդյունավետ է եղել, և շուկայում պահանջարկը հայկական օճառի նկատմամբ ավելացել է: Կաուստիկ սոդայի արտադրությունը ունեցել է անկման միտում, 2011 թվականին դրա արտադրությունը 2007 թվականի արտադրությունից 95 տոկոսով պակաս է եղել: Սինթետիկ կաուչուկի արտադրությունը 2008 թվականի ճգնաժամից ի վեր մեծ անկում է ապրել, իսկ արդեն 2011 թվականին գրեթե դադարեցվել է: Կաուչուկի արտադրության բացակայությունը ինչ-որ կերպ բացատրվում է նաև նրանով, որ քիմիական արդյունաբերության լոկոմոտիվային ձեռնարկությունը՝ «Նաիրիտ գործարանը», 2010 թվականի ապրիլից դադարեցրել է արտադրական գործունեությունը էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով:

«Նաիրիտ գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2001 թ. մարտի 30-ին՝ օրենսդրությանը համապատասխան: «Դուստր Նաիրիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցվել է Ռուսաստանի Դաշնությունում 2007 թ. նոյեմբերի 14-ին: «Նաիրիտ Թրեյդինգ Քոմփանի Լիմիթիդ» ընկերությունը որպես «Դուստրի դուստր ընկերություն» գրանցվել է Բելիզում 2008 թ. դեկտեմբերի 7-ին:

2010 թ. օգոստոսի 18-ին «Ռայնովիլ» և «Նաիրիտ» ՍՊԸ-ների միջև կնքված միացման պայմանագրի համաձայն, «Նաիրիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վերակազմակերպվել է՝ «Ռայնովիլ» ՍՊԸ-ն միացնելով իրեն: «Ռայնովիլ» ՍՊԸ-ն գրանցվել է Ռուսաստանի Դաշնությունում 2006 թ. հոկտեմբերի 16-ին: Համաձայն փոխանցման ակտի՝ «Ռայնովիլ» ՍՊԸ-ի բոլոր իրավունքներն ու պարտականություններն անցել են «Նաիրիտ» ՍՊԸ-ին:

«Նաիրիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցվել է Ռուսաստանի Դաշնությունում 2010 թ. փետրվարի 26-ին, որի կանոնադրական կապիտալը կազմում է 27,599 հազար ՌԴ ռուբլի և բաշխված է հետևյալ մասնակիցների միջև. «Ռայնովիլ Փրոփրթի Լիմիթիդ Յու Բեյ» ընկերություն՝ 25%, «Նաիրիտ գործարան» ՓԲԸ՝ 75% :

1940 թ. ի վեր «Նաիրիտ գործարանն» արտադրում է քլորոպրենային կաուչուկ «Նաիրիտ» ապրանքանշանով, որը ներկայումս շատ հայտնի է համաշխարհային շուկայում: Քլորոպրենային կաուչուկի արտադրանքի հետ մեկտեղ ընկերությունն ունի համապատասխան հզորություններ մի շարք այլ քիմիական արտադրատեսակների արտադրության համար, ինչպիսիք են՝ ծծմբական թթուներ, կաուստիկ սոդա, նատրիումի հիպոքլորիդ, կարբինոլային օշարակ, լաք-էթինոլ և այլն:

Քլորոպրենային կաուչուկի առանձնահատկության շնորհիվ «Նաիրիտ գործարանը» դարձել է ռետինատեխնիկական իրեր արտադրող, ինչպես նաև կաբելային, լուսային և այլ արդյունաբերությամբ զբաղվող մի շարք ձեռնարկությունների գործընկեր, որոնք սփռված են աշխարհի տարբեր մասերում:

Այն Հայաստանի Հանրապետության առաջատար քիմիական ձեռնարկություններից մեկն է, որը մասնագիտացած է քլորոպրենային կաուչուկի և լատեքսների արտադրության մեջ:

«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ն առավել մեծ հասույթ է ստացել կաուչուկի իրացումից: 2010 թվականին ձեռնարկությունը կաուչուկի արտադրությունում ունեցել է 128 տոկոս աճ: Սակայն 2011 թվականին շատ քիչ քանակությամբ է կաուչուկ արտադրվել, և կաուչուկի իրացումից ստացված հասույթը եղել է ընդամենը 43908 հազար դրամ՝ 2010 թվականի 3,654,614 հազար դրամի փոխարեն: Աղյուսակից պարզ է դառնում, որ հասույթի գերակշիռ մասը ձեռնարկությունը ստանում էր հենց կաուչուկի արտադրությունից:

Ձեռնարկությունը 2009 թվականին կարողացել է որոշ չափով հաղթահարել 2008 թվականի անհամաչափությունը ընթացիկ ակտիվների և պարտավորությունների միջև: Սակայն արդեն 2010 թվականին ընթացիկ պարտավորությունները մոտ 60 տոկոսով են գերազանցել ընթացիկ ակտիվները, իսկ 2011 թվականին՝ 270 տո-

կոսով: 2010 թվականին ձեռնարկությունը 24,585,847 դրամի վնաս է կրել: 2009 թվականի մայիսին այստեղ պայթյուն է տեղի ունեցել, ինչը կարելի է դիտարկել որպես ներքին գործոնների ազդեցություն, որ բացասաբար է անդրադարձել ընդհանուր գործունեության վրա:

Աղյուսակ 4

«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն⁷

հազ. դրամով

		2009	2010	2011
1	Հասույթ	2,052,225	4,198,400	105,358
2	Վաճառքի ինքնարժեք	2,087,819	(5,314,551)	(78,368)
3	Համախառն շահույթ, վնաս	(35,594)	(1,116,151)	26,990
4	Այլ եկամուտ	1,448,575	1,876,219	1,500,805
5	Իրացման ծախսեր	(682,405)	(718,966)	(297,206)
6	Վարչական ծախսեր	(3,536,697)	(3,365,991)	(2,914,284)
7	Այլ ծախսեր	(14,015,309)	(18,512,379)	(13,096,751)
8	Գործառնական գործունեությունից վնաս	(16,821,430)	(21,837,268)	(14,780,446)
9	Ֆինանսական եկամուտներ	165,213	281,053	298,903
10	Ֆինանսական ծախսեր	(3,017,147)	(3,497,332)	(8,908,500)
11	Այլ ֆինանսական հոդվածներ	(2,590,424)	1,136,638	(2,286,856)
12	Վնաս մինչև հարկերը	(22,263,788)	(23,916,909)	(25,676,899)
13	Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում	2,015,175	(668,938)	5,261,421
14	Տարվա վնաս	(20,248,613)	(24,585,847)	(20,415,478)

Ուստի կարելի է եզրակացնել, որ ձեռնարկությունը 2009 թվականի ավարտին և 2010 թվականին գտնվել է սնանկացման առաջին և երկրորդ փուլերում: Իսկ արդեն 2010 թվականի 2-րդ կեսից ֆինանսական անկայունությունը կրել է խրոնիկ բնույթ, գործունեության ցուցանիշները ավելի են վատթարացել, արտադրությունը և վաճառքի ծավալները կտրուկ նվազել են (բնորոշ է սնանկացման երրորդ փուլին), աճել են վնասները, տեղի են ունեցել աշխատողների աշխատավարձի, պարտքերի մարման ուշացումներ

⁷ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, 2011 թ. դեկտեմբերի 31:

(բնորոշ է սնանկացման չորրորդ փուլին), ձեռնարկությունը չի կարողացել ճիշտ ժամանակին վճարել պարտքերն ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ մասնակի, և սնանկությունը իրավականորեն հայտնի է դարձել (բնորոշ է սնանկացման հինգերորդ փուլին):

«Նաիրիտ գործարանի» աշխատակիցների միջին թվաքանակը 2011 թվականին կազմել է 2,973 մարդ՝ 2010 թ.՝ 3,110-ի փոխարեն, այսինքն՝ 2011 թվականին աշխատանքից ազատվել է 137 մարդ:

ՓՈՔՐ ՔԻՄԻԱ: Փոքր և միջին քիմիան խիստ գիտատար ոլորտ է, որն ուղղված է փոքրատոննաժ (գրամներից, կիլոգրամներից մինչև մի քանի տասնյակ տոննա) բազմատեսակ անհատական օրգանական, էլեմենտօրգանական, պոլիմերային, ինչպես նաև անօրգանական, կոմպոզիցիոն ու հատուկ նշանակության նյութերի ստեղծմանն ու արտադրությանը: Միկրո-, փոքր- և միջին-տոննաժ քիմիայի արտադրություններն սկզբունքորեն տարբերվում են խոշորատոննաժ քիմիական արտադրություններից, քանի որ միավորում են հիմնարար գիտության, տեխնոլոգիաների նորագույն նվաճումները, իսկ արտադրանքի շուկայական արժեքը, բարձր ավելացված արժեքի շնորհիվ, համեմատելի է, երբեմն նաև գերազանցում է ոսկու և թանկարժեք քարերի գները:

Փոքր և միջին քիմիայի արտադրական պահանջարկը պայմանավորված է մարդկային գործունեության բազմաթիվ բնագավառներում (բժշկություն, էլեկտրոնիկա, գյուղատնտեսություն, շինարարություն, մեքենաշինություն, պարֆյուներային արդյունաբերություն, կենցաղ, և, առաջին հերթին, գիտական հետազոտություններում՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, կենսատեխնոլոգիա) որոշակի հատկություններով օժտված նյութերի լայն տեսականու կիրառությամբ:

Այս ոլորտում համաշխարհային շուկայում ստեղծված իրավիճակը բնութագրվում է արագ փոփոխվող և նորացվող տեսականու շարունակաբար աճող պահանջարկով: Ոլորտում ձևավորված աշխատանքի համաշխարհային բաժանման առանձնահատկություններից մեկն այն է, որ ճանաչված ֆիրմաները հիմնականում գնում են գիտատար արտադրանքն այն երկրներից, որտեղ կենտրոնացած են բարձր մասնագիտական որակավորմամբ գիտատեխնիկական ներուժ, արհեստավարժ կադրային ռեսուրսներ: Գնված արտադրանքը սպառողին է հասնում այդ ֆիրմաների մակնշմամբ:

Հայաստանը պատկանում է քիմիայի ոլորտում նորագույն տեխնոլոգիաներ, գիտատար մշակումներ ստեղծելու ունակ երկրների թվին՝ քիմիական գիտության ավանդաբար բարձր մակարդակի և արհեստավարժ կադրերի պատրաստման համակարգի շնորհիվ, ինչը թույլ է տալիս այստեղ փոքր և միջին քիմիայի զարգացման հեռանկարը հիմնավորված համարել:

Գերխնդիրը նոր տեխնոլոգիաների մշակմանն անհրաժեշտ տեխնոլոգիաների առևտրայնացման գործընթացի ակտիվացման, պատվերների ձևավորման ու որակի վերահսկման ժամանակակից համակարգին անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելն է:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացմանն ուղղված՝ 2012-2013 թվականների միջոցառումների ծրագրի հիմնական խնդիրներն են.

- 1) աջակցության պետական քաղաքականության ձևավորում,
- 2) անհրաժեշտ հումքային բազայի վերականգնում և զարգացում,
- 3) բազային ենթակառուցվածքային ձեռնարկությունների և համալիրների վերակառուցում ու զարգացում,
- 4) ներդրումային գրավչության բարձրացում, ներդրումների ներգրավման մեխանիզմների մշակում,
- 5) բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստման պատվերի ձևավորման մեխանիզմների մշակում,
- 6) փոքր ու միջին նորարարական ձեռնարկությունների աջակցության մեխանիզմների ներդրում,
- 7) ներմուծման փոխարինմանն ու արտահանմանն ուղղված՝ մրցունակ արտադրությունների կազմակերպմանը աջակցություն,
- 8) քիմիական տեխնոլոգիաների մշակման ու փոխանցման ծրագրերին աջակցություն,
- 9) գիտություն-արտադրություն կապերի, այդ թվում՝ գիտական հետազոտությունների ծրագրերում մասնավոր հատվածի

հետ համագործակցությանը նպաստող մեխանիզմների զարգացման նորմատիվ-իրավական հիմքերի ստեղծում:

ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Դեղագործությունը Հայաստանի ամենաարագ աճող արտահանող ոլորտներից է: Արտահանումը կազմում է ոլորտի թողարկման 57%-ը, իսկ արտահանման տարեկան միջին աճը՝ 24% (սկսած 2003 թ.):

Ոլորտի ներկա վիճակի համառոտ բնութագիրը.

- Հայաստանի ամենադինամիկ աճող ճյուղերից մեկն է (12.5% տարեկան միջին աճ՝ 2003-2010 թթ.),
- արտահանման բարձր կողմնորոշվածությունը (արտահանման մասնաբաժինը թողարկման մեջ 57%՝ 2010 թ.),
- դեղագործությունը Հայաստանի արտահանող եզակի ոլորտներից է, որ գրանցել է արտահանման աճ անգամ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի տարիներին,
- դիվերսիֆիկացված արտահանման շուկաներ (Վրաստան՝ 38%, Ռուսաստան՝ 18%, Ուզբեկստան՝ 13%, Բելառուս՝ 6%, Ուկրաինա՝ 5%, Կատար՝ 4%՝ 2010 թ.),
- հիմնական արտադրողների արտադրական հզորությունների ընդլայնում (Ֆարմատեք, Լիկվոր, Արփիմեդ, Էսկուլաս),
- նոր արտադրական հզորությունների կառուցման ընթացիկ նախագծեր,
- նորարարական նախագծեր բիոտեխնոլոգիաների բնագավառում:

Պետական աջակցության շրջանակներում այս ոլորտում ներառվելու են որակի սերտիֆիկացման համակարգերի ներդրման գործում աջակցությունը, որակի վերահսկողությունը, ֆինանսական մատչելիության ապահովումը, անդրազգային ընկերություններին դեպի Հայաստան նպատակաուղղելը և այլ գործիքներ:

Դեղերի շուկային բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- արտահանման բարձր կողմնորոշվածությունը (արտահանման բաժինը թողարկման մեջ 57%՝ 2010 թ.),

- դեղագործությունը Հայաստանի արտահանման եզակի ոլորտներից է, որ գրանցել է արտահանման աճ գլոբալ ֆինանսական ճգնաժամի տարիներին,
- դիվերսիֆիկացված արտահանման շուկաների առկայությունը (Վրաստան՝ 38%, Ռուսաստան՝ 18%, Ուզբեկստան՝ 13%, Բելառուս՝ 6%, Ուկրաինա՝ 5%, Կատար՝ 4%՝ 2010 թ.),
- հիմնական արտադրողների արտադրական հզորությունների ընդլայնում (Ֆարմաթեք, Լիկվոր, Արփիմեդ),
- նոր արտադրական հզորությունների կառուցման ընթացիկ նախագծերը:

Այս ամենից հետևում է, որ դեղագործության ոլորտը Հայաստանի ամենադինամիկ աճող ճյուղերից մեկն է և ունի զարգացման միտումներ (12.5% տարեկան միջին աճ 2003-2010 թթ.), 2010 թ. ճյուղում վաճառքը կազմել է 8.800.000 ԱՄՆ դոլար: Վաճառքի աճը 2003-2010 թթ. կազմել է 19.7%: Ճյուղում զբաղվածների թիվը 507 աշխատող է:

Աղյուսակ 5

Դեղագործական արտադրանքի արտադրություն⁸

Ցուցանիշներ	15 Ձեռնարկությունների քանակը՝	Փաստացի		Աճի տեմպը, %-ով
		2012 թ.	2011 թ.	
Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով /հազ. դրամ/		3.861.552	3.540.750	X
Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով /հազ. դրամ/, որից՝		4.116.801	3.353.168	122.8
ԱՊՀ երկրներում		1.429.396	1.094.466	130.6
Այլ երկրներում		659.237	374.207	176.2
Աշխատանքի արտադրողականությունը /դրամ/		6.883.337	6.875.243	100.1

⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական էլեկտրոնային կայք:

Հետևություններ.

- Հայաստանի արտահանման ներկայիս բոլոր շուկաներում դիտվում է ներմուծման դինամիկ աճ:
- Հայաստանի մասնաբաժինը բոլոր շուկաներում չի գերազանցում ներմուծման նույնիսկ 1%-ը:
- Ամենաշատ ներմուծող երկրներն են Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը և Բելառուսը, սակայն վերոնշյալ երկրներում մեծ է մրցակցությունը և առկա են ուժեղ տեղական արտադրողներ:
- Շուկայի հասունության ցածր մակարդակով և բնակչության մեծ թվաքանակով հեռանկարային է Ուզբեկստանի շուկան: Սակայն արժույթային խիստ կարգավորումը լուրջ խոչընդոտներ է առաջացնում հայկական արտահանողների համար (վճարումների ուշացումներ): Այս շուկաներում հայ արտահանողները ծավալների ընդլայնման լուրջ ներուժ ունեն: Այս առումով օրինակելի է Վրաստանի փորձը, որի արտահանումը 2003-2010 թթ. ընթացքում աճել է տարեկան 40%-ով՝ 2010 թ. հասնելով 32 մլն դոլարի: Հիմնական շուկաները նույնպես ԱՊՀ երկրներն են: Մասնավորապես՝ վրացական 3 հիմնական արտահանողները 2010-ին Ուզբեկստան են արտահանել 6 մլն դոլարի արտադրանք այն դեպքում, երբ Հայաստանի արտահանումը կազմել է 0.7 մլն դոլար:
- Մերձավոր Արևելքի երկրները հայկական ընկերությունների կողմից դիտարկվում են որպես արտահանման հնարավոր նոր շուկաներ:
- Յուրաքանչյուր շուկայի թիրախավորումը ենթադրում է մանրամասն ուսումնասիրության իրականացում և մուտքի ռազմավարության մշակում:

Հիմնական արտադրող ընկերությունները

«Արփիմեդ» ԱՊԸ

«Երևանի քիմիա-դեղագործական

ֆիրմա» ԲԲԸ

«Էսկուլաս» ՍՊԸ

«Լիկվոր» ՓԲԸ «Հագենաս» ՍՊԸ

Մեր կողմից իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ ներկա փուլում պետությունը առավել մեծ ուշադրություն է դարձնում պետական կարգավորման բնագավառում հայտնի մեթոդներից մեկին, մասնավորապես՝ արտաքին տնտեսական կարգավորմանը:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև այլ մեթոդների կիրառում: Մեր տնտեսության համար առավել նպաստավոր դերակատարություն կունենան.

- մենաշնորհյալների (օլիգարխների) նկատմամբ ուղղակի վերահսկողությունը,
- բնապահպանական հիմնախնդիրների վերահսկումը,
- ստանդարտների մշակումը:

Կարևոր են նաև միջնորդավորված պետական ներգործության մեթոդները, մասնավորապես.

- դրամավարկային ուղղորդված քաղաքականություն,
- եկամուտների վերահսկում,
- ուղղորդված սոցիալական քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված և մրցունակության բարձրացման քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է ուղեկցվի հետևյալ գործողություններով՝ զբաղվածության կարգավորում, ճյուղային ու տարածքային կառուցվածքում փոփոխությունների խթանումը:

Պետական կարգավորման ինքնուրույն մեթոդ է տնտեսության պետական համակարգի ձևավորումը: Մեր կարծիքով՝ այս բնագավառը ևս կարիք ունի համապատասխան ծրագրերի մշակման և ներդրման: Առանձին ուշադրության է արժանի նաև պետական կարգավորման տնտեսական մեթոդների շարքը դասվող դիսկոնտային քաղաքականությունը, որն իրականացնում է կենտրոնական բանկը: Դա ներառում է.

1. պետական պահուստների (որոնք երկրի ֆինանսական ինստիտուտները պարտավոր են պահել բանկերում) սահմանում և փոփոխում,
2. գործողություններ արժեթղթերի շուկայում:

Արդյունաբերական քաղաքականության իրականացման ձևերը կարելի է բաժանել երեք խոշոր խմբերի.

1. պետական նպատակային ծրագրեր,
2. կանխատեսումներ,
3. իրավիճակի մոդելավորում:

Մեր կողմից ուսումնասիրվող ճյուղում՝ դեղագործության ոլորտում, Կառավարությունն արդեն մշակել է պետական նպատակային ծրագրերը: Մանրակրկիտ վերլուծության ենթարկելով այդ բոլոր գործող ընկերությունների գործունեությունը և դրանց շուկաները՝ ունենք որոշակի նկատառումներ ոլորտի առավել արդյունավետ կազմակերպման, դրա մրցունակային դերի բարձրացման և արդյունքում՝ արտահանման ծավալների մեծացման վերաբերյալ:

- Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք.
1. բարելավել հասանելի վարկերի տրամադրման և ստացման կառուցակարգերը (մեխանիզմները),
 2. արտահանող ընկերությունների համար ներդրումային ապրանքների և ներդրումային ծրագրերի շրջանակներում կիրառել ներմուծվող ապրանքների ԱԱՀ-ի հետաձգում,
 3. խրախուսել արտասահմանյան ներդրումները,
 4. մաքսավճարների (ներմուծման կամ վերացման) տարբերակված մոտեցում իրականացնել,
 5. ոլորտում ստեղծել պետական հատված, որը կտիրապետի համապատասխան առաջավոր տեխնիկայի և տեխնոլոգիայի,
 6. մասնակցություն այս բնագավառի միջազգային կազմակերպություններում,
 7. առևտրական ներկայացուցչությունների բացմամբ, համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպմամբ նպաստել նոր շուկաներում ներգրավվելու հնարավորությանը,
 8. արտասահմանյան և հայրենական փորձի ուսումնասիրման և վերապատրաստման միջոցով բարձրացնել կադրային ներուժի մակարդակը,
 9. տեխնոպարկերի, ինչպես նաև արդյունաբերական պարկերի ցանցի ընդլայնում,
 10. առավելապես աջակցել ոչ թե արդեն կայացած ընկերություններին, այլ նպաստել նորերի ձևավորմանը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ինչպես փաստում է միջազգային փորձը, երկրի տնտեսության զարգացումը չպետք է ապահովվի միայն երկրում ավանդական համարվող ընկերությունների միջոցով, գլխավոր խնդիրը տնտեսության ոչ թե մեկ, թեկուզ առավել հաջողակ և շահութաբեր ոլորտի գործունեության զարգացումն է, այլ նրա բազմազանեցումը (դիվերսիֆիկացում): Ընդ որում, դա պետք է ուղեկցվի երկրում ավանդական իրավունքների ամրապնդմամբ և բոլորի համար հավասար խաղի կանոնների ապահովմամբ:

4. ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԹԻՐԱՆԱՎՈՐՈՒՄ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Պետության բրենդի ձևավորումը ցանկացած երկրի կարևորության բարձրացմանն ուղղված ռազմավարական գործընթաց է: Արտաքին տնտեսական քաղաքականությունը և տնտեսական աճի զարգացման դինամիկան արտաքին շուկայում պայմանավորում են երկրի հեղինակությունը:

Հայկական կոնյակը Հայաստանի ամենհայտնի խորհրդանիշներից է, որ ունի իր ուրույն միֆոլոգիան: Դրա առանձնացվող բնութագրիչներն ու որակը հայտնի են ամբողջ աշխարհին:

Փորձենք բացահայտել Հայաստանի Հանրապետությունում կոնյակագործության զարգացման ուղիները ոլորտի համալիր ուսումնասիրությամբ, կատարել գիտական հենք ունեցող առաջարկություններ, որոնց իրականացման արդյունքում հնարավոր կդառնա ոլորտի ներդրումային միջավայրի գրավչության և մեր հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը: Ըստ այդմ՝ հետազոտական աշխատանքում.

- ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կոնյակագործության ոլորտի ձևավորման և զարգացման անցած ուղին ու առանձնահատկությունները,
- իրականացվել է կոնյակագործության մրցակցային շուկայի համալիր վերլուծություն, որի հիման վրա բացահայտվել է ոլորտի զարգացման դինամիկան,
- կատարվել է անդրադարձ կոնյակի՝ որպես ալկոհոլային էլիտար խմիչքի ընկալմանը սպառողների կողմից,
- ներկայացվել են կոնյակի համաշխարհային շուկայում տիրող ընկալումների ու օրենսդրական կարգավորումների անհամաձայնությունները,
- քննարկվել են ոլորտային ռազմավարության շրջանակներում իրականացվող պետական աջակցության ծրագրերը և վերլուծվել են կոնյակագործության ոլորտին վերաբերող աջակցության ծրագրերը,

- ներկայացվել է արդյունաբերական քաղաքականության շրջանակներում ոլորտային խորհրդի կողմից կազմված կոնյակագործության ոլորտային ռազմավարությունը, դրանով սահմանված նպատակների իրագործման ուղղությամբ աշխատանքները,
- ելնելով կոնյակագործության ոլորտում կատարված ուսումնասիրություններից՝ ներկայացվել են եզրակացություններ ու առաջարկություններ, մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն թե՛ Հայաստանի Հանրապետության ընդհանուր ներդրումային միջավայրի գրավչության բարելավմանը կոնյակագործության ոլորտում, թե՛ երկրի մրցունակության բարձրացմանը:

Կոնյակագործության 2011-2020 թթ. ոլորտային ռազմավարության փաստաթղթում **որպես Հայաստանի Հանրապետության կոնյակագործության ոլորտի առավելություններ** առանձնացվում են հետևյալները՝ կոնյակի արտադրության համար յուրահատուկ հատկանիշներով որակյալ խաղողի հումքի առկայություն (օր.՝ շաքարի պարունակություն)՝ պայմանավորված բնակլիմայական գործոններով՝ արևային օրերի քանակ, հողի և ջրի որակ, խաղողագործության համար բնակլիմայական բարենպաստ և քիչ թե շատ կայուն պայմաններ, կոնյակագործության ոլորտում արտադրական կուլտուրայի առկայություն, կուտակված մեծ փորձ և գիտելիքներ ոլորտում, առաջատար փոքրաթիվ ընկերություններն ունեն միջազգայնորեն մրցունակ սարքավորումներ՝ թե արտադրության, թե լաբորատոր ստուգումների համար, կոնյակագործների միության գործունեության ծավալում, բավականին զարգացած դիզայնի և տպագրության ծառայություններ, նախկինում հզոր բրենդի դեռևս պահպանված ներուժ՝ նախկին ԽՍՀՄ երկրներում:

Իսկ որպես կոնյակագործության ոլորտի խնդիրներ ներկայացվում են հետևյալները՝ մեծ ֆերմերային տնտեսությունների բացակայություն, հումքի ձեռքբերման հստակ մեխանիզմների բացակայություն, պայմանագրային համաձայնությունների թերի դաշտ, գնային գրադացիայի բացակայություն տարբեր տեսակի և որակի խաղողի համար, խաղողի արտադրության ծավալների վերահսկման անհնարինություն վիճակագրական ոչ պատշաճ տվյալներ

րի առկայության պարագայում, բարձր որակավորում ունեցող նոր կադրերի սահմանափակ ներհոսք, համապատասխան մասնագիտություններ ապահովող համալսարանների կողմից այս ոլորտի մասնագետի պատրաստման ուղղությամբ չափազանց սահմանափակ ներդրումների իրականացում, մեծաթիվ կեղծիքների առկայություն ոլորտում, իսկության ստուգումների չգործող համակարգ, կոնյակի արտադրության համար ներմուծված կոնյակի սպիրտերի կամ այլ հումքից սպիրտերի լայնորեն օգտագործում՝ որպես «հայկական կոնյակ» վաճառվող արտադրանքում, որակի վերաբերյալ իմիջի նվազում՝ առավել ցածրորակ ապրանքների ծավալների աճի պատճառով, նոր շուկաների վերաբերյալ տեղեկատվության պակաս և սակավ մարքեթինգային կարողություններ, «հայկական կոնյակ» ապրանքային անվանման օգտագործման հետ կապված խնդիրներ միջազգային շուկաներում:

Տարբեր երկրներում ոգելիցի սպառման մակարդակը և նախապատվությունները մեծապես կախված են մշակութային առանձնահատկություններից և կենցաղից: Զբաղվածության բարձր մակարդակով զարգացած երկրներում ավիոհոլի սպառման մակարդակը համեմատաբար համեստ է:

Եվրոպական սպառումը կազմում է ոգելից խմիչքների համաշխարհային սպառման գրեթե մեկ երրորդը: Սպիրտային խմիչքների սպառման մակարդակը բավական բարձր է Արևելյան Եվրոպայի երկրներում. մեկ շնչի հաշվով գերազանցում է սպառման միջին համաշխարհային մակարդակը (6 լիտր) 2-3 անգամ:

Խմիչքների ներքին սպառման կառուցվածքում մեծապես գերակշռում է օղու սպառումը՝ 63%, որին հետևում են գարեջուրը՝ 22% և գինին՝ 10%, իսկ միայն կոնյակը՝ 5%:

Աղյուսակ 6-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետության կոնյակի արտադրության ծավալները (1000 լիտրերով) 2007-2012 թվականներին, ինչպես նաև 2013 թվականի հունվար-օգոստոս ամիսներին արտադրված կոնյակի ծավալները:

Կոնյակի արտադրության ծավալներում անկում է նկատվել միայն 2009 թվականին, այնուհետև կրկին աճ է գրանցվել: Իսկ Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ հայկական կոնյակի արտադրության ծավալները 2011 թվականին կազմել

են 14 482 644,3 լիտր, արտահանման ծավալները՝ 12 094 477,3 լիտր, երկրի ներսում իրացման ծավալները՝ 2 129 818,8 լիտր:


Աղյուսակ 6

Կոնյակի արտադրության ծավալները⁹

հազ. լիտրով

	2007	2008	2009	2010	2011	2012	2013 Հունվար- օգոստոս
ԿՈՆՅԱԿ	14131	16047	9869	12749	15375	18 481	11 151

Հայկական կոնյակի արտադրության ծավալներում 22,0 տոկոսը արտադրվել է «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերության, 20,0 տոկոսը՝ «Պռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և 19,9 տոկոսը՝ «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերության կողմից (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հայկական կոնյակի արտադրության ծավալներում առավել խոշոր արտադրողների մասնաբաժինը, 2012 թվական¹⁰

⁹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2007-2012 թվականների տարեգրքեր, 2013 թվականի հրապարակում՝ հունվար-օգոստոս. www.armstat.am

Խոսելով խաղողագործության, խաղողի արտադրության ծավալների մասին՝ պետք է նշել, որ այն հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերից է, որի դերը տնտեսության մեջ նշանակալից է:

Խաղողագործությունը հանրապետությունում զարգացում է ապրել առավելապես 1970-1985 թթ. ընկած ժամանակահատվածում, երբ բերքատու այգիները կազմում էին 35 հազ. հա՝ ապահովելով գրեթե 250 հազ. տոննա համախառն բերք, որի շուրջ 85%-ը (210 հազ. տոննա) հանձնվում էր վերամշակման: Նշված տարիներին խաղողագործության մեջ ապահովվում էր բարձր շահութաբերություն՝ շուրջ 25%:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի արտադրության ծավալները 2007-2011 թթ. ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Խաղողի արտադրության ծավալները¹¹

հազ. տոննա

	2007	2008	2009	2010	2011
ԽԱՂՈՂ	218.9	185.8	208.6	222.9	229.6

Ինչպես տեսնում ենք, խաղողի արտադրության ծավալների անկում 2007-2011 թվականների ընթացքում նկատվել է միայն 2008 թվականին՝ 185.8 հազ. տոննա, այնուհետև կայուն աճ է արձանագրվել. 2011 թվականին խաղողի արտադրությունը կազմել է 229.6 հազ. տոննա:

Խաղողի բերքատվության ցուցանիշը 2011 թվականին կազմել է 158.0 ցենտներ՝ 1 հեկտարից: Խաղողի բերքատվության ցուցանիշի մասով ևս անկում գրանցվել է միայն 2008 թվականին՝ 128.0 ցենտ՝ 1 հեկտարից:

Հանրապետության խաղող վերամշակող ընկերություններում տեղակայված մթերման հզորությունները կազմում են շուրջ 265.0 հազ. տոննա: Արտադրվող խաղողի գերակշռող մասը մթերվում և

¹⁰ Տվյալները հաշվարկվել են համապատասխան կազմակերպությունների կողմից տեղեկատվության հավաքագրման միջոցով:

¹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2007-2012 թվականների տարեգրքեր, www.armstat.am

վերամշակվում է: Մթերման մասնաբաժինը 2012 թ. կազմել է արտադրված խաղողի 64.9%, իսկ 2011 թ.՝ 56.2%-ը: 2012 թ. օգտագործվել է մթերման հզորությունների 59.1, իսկ 2011 թ.՝ 48.6%-ը:

Աղյուսակ 8

խաղողի բերքատվությունը¹²

	2007	2008	2009	2010	2011
խաղողի բերքատվությունը (ցենտներ՝ 1 հեկտարից)	153.6	128.0	144.9	151.5	158.0

Խաղող մթերելիս խնդիրներ են առաջանում այն դեպքում, երբ մթերումները սկսելու նախաշեմին գինենյութի պահեստավորմանն անհրաժեշտ տարողությունները դատարկված չեն լինում: Այս խնդիրները հիմնականում կապված են գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների մրցունակության բարձրացման, որակի բարելավման և իրացման, հատկապես արտահանման հետ, քանի որ տեղական շուկայի պահանջարկը կազմում է խաղողի հումքով ոգելից խմիչքների մինչև 12%-ը, արտադրանքի մնացած՝ բացարձակ գերակշռող մասը, մշտապես արտահանվում է:

Վերջերս հաճախ են քննարկվում խաղողի մթերմանն ու առաջարկվող գներին առնչվող խնդիրներ: Հատկապես շահարկվում է այն հանգամանքը, թե գյուղացին միշտ դժգոհել ու դժգոհում է մթերման գներից:

Կատարենք փոքրիկ վերլուծություն:

Բարենպաստ պայմաններում Արարատյան դաշտավայրի խաղողի այգիների բերքատվությունը տատանվում է 1 հեկտարից մինչև 130-150 ցենտներ: Սակայն եթե հաշվի առնենք, որ գյուղացին խաղողի մշակման ընթացքում ունենում է բազմաթիվ դժվարություններ՝ կապված եղանակային պայմանների, ոռոգման ջրի, պարարտանյութերի և անորակ թունաքիմիկատների հետ, նշված ցուցանիշը վերջին 10 տարում իջնել է և հասել 100-120 ցենտների:

¹² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2007-2012 թվականների տարեգրքեր, www.armstat.am

Արարատյան դաշտավայրի 4-5 անձից բաղկացած միջին ընտանիքին բաժին է ընկնում 0,5-0,6 հեկտար հողատարածք: Ամենալավ բերքատվության պայմաններում ընտանիքը կարող է ստանալ 5,5-6,5 տոննա խաղող: Լիարժեք մթերելու դեպքում ընտանիքը կստանա մթերողից 770-910 հազար դրամ:

Եթե 8 տարի առաջ խաղողի մեկ կիլոգրամի ինքնարժեքը գնահատվում էր մոտ 75 դրամ, ապա այսօր՝ 95-100 դրամ:

Ընտանիքի զուտ եկամուտը հաշվելու համար ստացած գումարից հանենք խաղողի ինքնարժեքը: Այսպիսով՝ 4-5 անձից բաղկացած միջին ընտանիքը խաղողի մշակությունից տարեկան ստանում է 234-276 հազար դրամ մաքուր եկամուտ: Պատկերն ամբողջացնելու համար կատարենք ամսական հաշվարկ. 4-5 անձից բաղկացած ընտանիքը խաղողի մշակությունից ամսական ստանում է 19,5-23,0 հազար դրամ: Եվ այս ընտանիքները համարվում են սոցիալապես ապահով:

Այժմ փորձենք հաշվարկել մթերող կազմակերպությունների եկամուտները: Կոնյակի արտադրությամբ զբաղվող գործարանները մեկ լիտր կոնյակի սպիրտ ստանալու համար օգտագործում են 7 կգ խաղող, որի համար գյուղացուն, լավագույն դեպքում, վճարում են 980 դրամ: Մեկ լիտր կոնյակի սպիրտը հնեցնելու համար տարեկան ծախսվում է 100 դրամ: 5 տարի հնեցնելուց հետո գործարանը մեկ լիտր կոնյակի սպիրտից ստանում է 3 կես լիտր տարողությամբ շշով պատրաստի արտադրանք, որոնց շշալցման համար ծախսում է մոտ 500 դրամ: Ընդհանուր հաշվով, կոնյակ արտադրողը 3 հատ կես լիտր տարողությամբ 5 տարեկան կոնյակների համար ծախսում է 1980 դրամ: Իհարկե, այս թվին կարելի է գումարել 20 տոկոս այլ ծախսեր, սակայն եթե հաշվի առնենք, որ 5 տարեկան կես լիտրանոց մեկ շիշ կոնյակի գինը տատանվում է 3500-5000 դրամի սահմաններում, ակնհայտ կդառնա, որ մեկ կիլոգրամ խաղողը 140 դրամով մթերելը չափազանց ցածր գին է:

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երկու տարի առաջ կատարել էր վերլուծություն կոնյակի արտադրության շուկայում կենտրոնացվածության մակարդակը բացահայտելու համար: Եվ այսպես՝ հետազոտությունը կատարվել է «Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտա-

դրության կոնյակներ» և «Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» արտադրողների շրջանում (տե՛ս աղյուսակ 9):

«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում 2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 11338.7 և արտահանվել է 9189.2 հազ. լիտր կոնյակ: Այդ նույն ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 1857.3 հազ. լիտր:

Աղյուսակ 9¹³

Հայկական կոնյակի արտադրությունում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների թիվը և շուկայի կենտրոնացվածության աստիճանը՝ 2012 թվականի ընթացքում

Մասնավորների թիվը	Ապրանքային շուկայում գերիշխող ունեցող տնտեսավարող սուբյեկտների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը* և դրա բնութագրումը		
		69.82	միջին	
«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	28	2	69.82	միջին
«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	18	2	92.53	բարձր

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70% < CR-3 < 100%, միջին աստիճան՝ եթե 45% < CR-3 < 70%, ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%:
CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսավարող սուբյեկտների բաժնիների գումարն է:

«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալ ունեցող տնտեսավարող սուբյեկտներն են՝ «Պոռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունը՝ 50.09 տոկոս, «Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 11.38 տոկոս և «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 8.35 տոկոս

¹³ Աղբյուրը՝ ՏՄՊԴՀ պաշտոնական ինտերնետային կայք՝ www.competition.am

բաժնով: Շուկան միջին կենտրոնացված է՝ 69.82 տոկոս կենտրոնացվածության աստիճանով:

Իրացման ծավալներով առաջատար «Պոռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունը և «Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայում միասին գրավում են դրա ավելի քան մեկ երկրորդը (61.47 տոկոս) և դրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2011 թվականի տվյալների հիման վրա:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2011 թվականի ընթացքում արտադրության ծավալը կազմել է 3144.0, արտահանման ծավալը՝ 2878.7 հազ. լիտր: Հայաստանի Հանրապետությունում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 272.7 հազ. լիտր կոնյակ:

Իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտներն են՝ «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 61.66 տոկոս, «Պոռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունը՝ 21.09 տոկոս և «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 9.78 տոկոս բաժնով:

«Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական և «Պոռոշյանի կոնյակի գործարան» սահմանափակ պաստասխանատվությամբ ընկերությունները իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (82.75 տոկոս), և դրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան՝ 92.53 տոկոս:


Ներկայացնենք կոնյակ արտադրող ձեռնարկությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման:

Կոնյակի արտադրության ծավալների ցուցանիշով¹⁴ (համդրելի գներով) 2012 թվականի աճի տեմպը կազմել է 114.5%՝ 2011 թվա-

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը» հրատարակում, www.armstat.am


կանի նկատմամբ, իսկ նույն ցուցանիշի աճի տեմպը ընթացիկ գներով կազմել է 123.3%: Պատրաստի արտադրանքի իրացման ցուցանիշի աճի տեմպը ընթացիկ գներով կազմել է 125.4% 2012 թվականին՝ հաշվարկված 2011 թվականի նկատմամբ: Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը 2012 թվականին կազմել է 1770 մարդ՝ 2011 թվականի 1973 մարդու փոխարեն:

ՀՀ կոնյակի և կոնյակի սպիրտի արտադրության և արտահանման հարաբերակցությունը ցույց տանք գծապատկեր 2-ի միջոցով: Պատկերված է 2010-2012 թվականների ՀՀ կոնյակի արտադրության և արտահանման ծավալների հարաբերակցությունը:



Գծապատկեր 2. **Կոնյակի արտադրությունն ու արտահանումը 2010-2012 թթ. (հազ. լիտր)**

Ինչ վերաբերում է Հայաստան կոնյակի ներմուծմանը, ապա դրա ծավալը մշտապես չնչին է եղել, և դա ունեցել է մեկանգամյա գործարքի բնույթ: Հայաստանի Հանրապետությունում իրացվող կոնյակի կառուցվածքում տեղական արտադրանքի մասնաբաժինը գերակշռում է: Գծապատկեր 3-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետություն 2010-2012 թվականներին կոնյակի ներմուծման ծավալները:



Գծապատկեր 3. **Ներկրվող կոնյակի ծավալները 2010-2012 թթ. (հազ. լիտր)**

Այժմ անդրադառնանք կոնյակագործության ոլորտի ընկերությունների արտադրանքի արտահանման աշխարհագրությանը (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Կոնյակագործության ոլորտի ընկերությունների արտադրանքի արտահանման հիմնական երկրները¹⁵

Հ/Հ	Երկիրը	2011 թ. (հազ. ԱՄՆ դոլար)	2012 թ. (հազ. ԱՄՆ դոլար)	Աճի տեմպը (%)
1.	Ռուսաստանի Դաշնություն	96847,2	137603,0	142,1
2.	Ուկրաինա	6435,1	9092,8	141,3
3.	Բելառուս	4277,7	4905,1	114,7
4.	Վրաստան	1005,6	1749,6	174,0
5.	ԱՄՆ	1082,2	1632,4	150,8

Ինչպես տեսնում ենք, հայկական կոնյակի արտահանման գլխավոր գործընկեր-երկիր 2012 թվականին շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը՝ 137.6 մլն ԱՄՆ դոլար արտահանման ծավալով (արժեքային արտահայտությամբ), այնուհետև՝ Ուկրաինան՝ 9.09 մլն ԱՄՆ դոլար, իսկ երրորդ տեղում Բելառուսը՝ 4.9 մլն ԱՄՆ դոլար:

¹⁵ Աղբյուրը՝ www.mineconomy.am Գինեգործության և կոնյակագործության ոլորտների 2012 թվականի ամփոփ հաշվետվություն:

Եզրակացություն

Կոնյակագործության ոլորտի վերլուծությունը և կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները՝ ելնելով հետևյալ 4 դիտարկումներից՝ արտադրանքի որակի ապահովում, իրացման շուկաների զարգացում, կարողությունների ընդլայնում, ենթակառուցվածքների զարգացում:

1. Կարծում ենք, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հայկական կոնյակի արտահանման նոր շուկաների թիրախավորմանը: Մասնավորապես՝ նպատակային շուկաների որոշման տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ դիտարկումները.
 - կոնյակի սպառման մշակույթը զգալիորեն նվազում է ավանդական շուկաներում,
 - ԱՄՆ-ն, Չինաստանը և Սինգապուրը բրենդիի խոշորագույն ներմուծողներն են, սակայն կան այդ շուկաներ մուտք գործելու որոշակի արգելքներ, մասնավորապես՝ սահմանված քանակային քվոտաներ ներմուծվող ավտոմոբիլային խմիչքների նկատմամբ,
 - սպառման աննախադեպ աճ են գրանցում կոնյակի նոր շուկաները՝ հատկապես Հարավարևելյան Ասիայի երկրներում (համաշխարհային սպառման մոտ 1/3 ֆիզիկական ծավալով¹⁶), տարածաշրջանային շուկայում մեծ մասնաբաժին ունեն Հնդկաստանը և Ֆիլիպինները, որոնք մեծավ մասամբ սպառում են տեղական արտադրության ցածրակարգ բրենդի՝ պատրաստված շաքարի օշարակից:
2. Այս ոլորտի արտադրանքի արտահանման խթանման ուղղությամբ առաջարկում ենք առավել արդյունավետ կազմակերպել խաղողի մթերման գործընթացը, մասնավորապես՝ կատարելագործել մթերման իրավապայմանագրային դաշտը, աշխատանքներ ձեռնարկել գինու սպառման ծավալների ընդլայնման համար:

¹⁶ Աղբյուր՝ ՄԱԿ-ի Comtrade աղանց բազա, WB WDI.

3. Հայաստանի Հանրապետությունում կոնյակագործության ոլորտը կարգավորող հարկային համակարգն ու դրա առջև դրված խնդիրների արդյունավետ լուծումը պահանջում են բարեփոխումների իրականացման համակարգված մոտեցում: Դրանց հիմնական նպատակը կարելի է ձևակերպել որպես եկամուտների անհրաժեշտ մակարդակ ապահովող նպատակով հարկային դրույքաչափերի հաշվարկման այնպիսի մեխանիզմների սահմանում, որոնք նվազագույնի կհասցնեն ոլորտի համակողմանի զարգացման վրա հարկման խոչընդոտող ազդեցությունը (օրինակ՝ կարելի է վերանայել ավելացված արժեքի հարկի բեռի թեթևացում օրենսդրական ճանապարհով, ի դեպ, այս հարցն արդեն իսկ քննարկվում է Եվրոմիության մի շարք երկրներում): Նշենք նաև, որ ոլորտի հարկման լավագույն համակարգի սահմանումը ենթադրում է հարկման լայն բազայի նկատմամբ սահմանային ցածր դրույքաչափերի սահմանում հարկման տնտեսական արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ այդպիսով՝ գործարարության և ներդրումային գրավչության խթանում ճյուղում:

4. Մյուս կողմից՝ Մաքսային միությանը (ՄՄ) Հայաստանի Հանրապետության անդամակցելու հանգամանքը դիտարկելիս հարկ ենք համարում նշել, որ այսօր մեր երկրից արտահանվող ապրանքների համար կարող են ստեղծվել անբարենպաստ պայմաններ, մասնավորապես՝ մաքսատուրքերի բարձրացման հետ կապված խնդիրները կարող են լրջորեն խոչընդոտել ոլորտի հետագա զարգացմանը, արտահանման խթանմանը (թերևս, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի Հանրապետությունների հետ արտաքին առևտրի իրականացման դեպքում):

5. Կոնյակագործության ոլորտում առաջնային խնդիր է համարվում արտադրանքի որակի բարելավման խստագույն միջոցառումների իրականացումը «խաղողի մթերում-կոնյակի արդարություն» ողջ շղթա-

յում: Անհրաժեշտ է ապահովել թանկարժեք և որակյալ կոնյակի արտադրության համար նախատեսված խաղողի տեսակների լայնածավալ մշակումն այսօր, քանի որ մթերումն այդ ցանքատարածություններից հնարավոր կլինի միայն մի քանի տարի հետո:

6. Անհրաժեշտ է կատարելագործել հանրապետությունում կարկտի դեմ պայքարի եղանակներն առավելապես՝ հակակարկտային կայանների միջոցով: Մասնավորապես՝ կարկտային ամպի վրա ազդանյութերով ակտիվ ներգործությունների համար առաջարկվող տարբեր եղանակներից կարելի է ընտրել, օրինակ, հրետանային արկերի և հրթիռների միջոցով բյուրեղագոյացնող ազդանյութերը անմիջապես ամպի գերսառեցված հատված ներմուծելու միջոցառումները, որտեղ արտահայտվում է սառցագոյացման ակտիվությունը, դրանք դարձնել առավել հաճախակի և այլն:

7. Հայկական կոնյակի բրենդի վրա կարող է հնարավոր բացասական ազդեցություն թողնել կոնյակի արտադրության միջին, անգամ փոքր կազմակերպությունների ակտիվ գործունեությունը, որոնց արտադրանքը պետության կողմից դժվարությամբ է որակի խստագույն վերահսկողության ենթարկվում: Հետևաբար՝ միջազգային շուկաներում մրցակցային դիրքերի ամրապնդման առումով անհրաժեշտություն է առաջանում արտահանվող կոնյակի որակական հատկանիշների վրա պետության վերահսկիչ դերի բարձրացման, որով արտասահմանում չի վտանգվի հայկական կոնյակի համբավը: Օրինակ՝ կարելի է ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխանող լաբորատորիա, որի փորձաքննության արդյունքները այս կամ այն կոնյակի որակի վերաբերյալ պարտադիր կլինի տվյալ կազմակերպության կողմից այդ կոնյակի հետագա արտադրության կազմակերպման համար: Արտադրողներին այս տեսանկյունից խորհուրդ է տրվում համապատասխանության հավաստման գործընթացում կատարվող արտադրության վիճակի վերլուծությամբ և (կամ) որակի կառավարման համակարգերի ներ-

դրմամբ խթանել թողարկվող կոնյակների կայուն որակի ցուցանիշների ամրագրումը:

8. Փորձաքննության և սերտիֆիկացման պրակտիկան ցույց է տալիս, որ կոնյակն առավել կեղծվող խմիչքներից է: Սովորական սպառողը կարող է հայտնաբերել կոպիտ կեղծման հատկանիշները, փորձված փորձագետ-համտեսողը՝ կեղծման հատուկ միջոցներն ու եղանակները: Կոնյակների իսկության ավելի ամբողջական և հավաստի փորձաքննություն կարող է իրականացվել միայն բարձր որակավորված անձնակազմի կողմից և բարձրագույն տեխնոլոգիաներով գինված լաբորատորիայում (ինչն այս պահին առկա չէ ՀՀ-ում), այդ իսկ պատճառով արտադրողները պետք է հաճախ կազմակերպեն ցուցահանդեսներ, տոնավաճառներ, համտես-մրցույթներ սպառողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Նմանատիպ միջոցառումները հնարավորություն կտան նաև զովազդելու նոր արտադրանքը և դրա նկատմամբ պահանջարկ ձևավորելու, բացահայտելու առկա իրական պահանջարկը շուկայում, ստեղծելու արտադրանքի արտադրության, անվանացանկի նորացման ու շուկայի ընդլայնման համար նոր գաղափարներ և ծրագրեր:

9. Նաև առաջարկվում է կոնյակի գործարաններում գործող մարքեթինգային ծառայությունների գործառույթների ուղղորդում ոչ միայն իրացման շուկաների բացահայտմանը, այլև արտահանվող երկրների կոնյակ սպառողների շրջանում հետազոտությունների իրականացմանը՝ հաշվի առնելով ինչպես սպառողների պահանջմունքների բավարարման աստիճանը, այնպես էլ նրանց կողմից կատարվող առաջարկությունները պատրաստի արտադրանքի դիզայնի, շապրման որակի, չափերի, համայնի հատկանիշների վերաբերյալ:

Գիտահեղափոխական խումբը մշակել է «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

Անհրաժեշտությունը: «Արդյունաբերական քաղաքականության» (ԱՔ) մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք կարևորագույն խնդիրների լուծմամբ և կանոնակարգմամբ, որոնք ուղղակիորեն առնչվում են երկրի տնտեսության զարգացման, արտահանման կառուցվածքի կատարելագործման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և սոցիալ-տնտեսական մի շարք այլ խնդիրների լուծմանը:

«ՀՀ կառավարության 2009 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N40-Ն որոշմամբ որպես գերակա խնդիր ամրագրված է արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացումը, իսկ որպես խնդրի լուծման ուղիներ՝ արդյունաբերության մեջ գիտության և նորարարության արդյունքների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման աջակցության միջոցով արտադրանքի վերամշակման խորացումը, տեխնոլոգիական արդիականացման գործընթացների ակտիվացման խթանումը և արտադրողականության բարձրացումը, արդյունաբերության գերակա ճյուղերի առնչությամբ կլաստերային զարգացման քաղաքականության իրագործումը փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մեխանիզմների կատարելագործումը և արդյունավետության բարձրացումը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այդ հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել ու ամրագրել ԱՔ իրականացման սկզբունքները, հիմնական ուղղությունները, պետական և տարածքային մարմինների լիազորությունները և այլն:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները: Ներկայումս մի շարք իրավահարաբերություններ, որոնք ծագում են արդյունաբերության ոլորտում տնտեսավարողների, պետական կառավարման և տարածքային կառավար-

ման մարմինների միջև իրավաբանորեն հստակեցված չեն: Մասնավորապես՝ դեռևս օրենսդրորեն սահմանված չեն արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աջակցության ուղղությունները, պետական կարգավորման մեխանիզմները: Դրա հետ մեկտեղ, դեռևս օրենսդրորեն հստակեցված և սահմանված չեն ոլորտին առնչվող մի շարք հասկացություններ:

Կարգավորման նպատակը և բնույթը: Առաջարկվող օրենքը կարգավորելու է այն հարաբերությունները, որոնք ծագում են իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինների միջև՝ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Օրենքի նախագիծը սահմանում է արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության մշակման և իրականացման ուղղությունները, զարգացման պետական ծրագրի, ինչպես նաև արդյունաբերական զարգացման տարածքային ծրագրերի մշակման, հաստատման, իրականացման և փորձաքննության ընթացակարգը: Օրենքի նախագիծը սահմանում է նաև արդյունաբերության սուբյեկտներին տրամադրվող պետական աջակցության հիմնական ուղղությունները, արդյունաբերական գոտիների կազմավորման ու գործունեության հիմնական սկզբունքներն ու դրանց ներկայացվող պահանջները:

Ակնկալվող արդյունքները: Օրենքի նախագծի ընդունումը կնպաստի արդյունաբերության ոլորտում պետական կարգավորման և աջակցության գործընթացների համակարգմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը, տեղական արտադրողների մրցունակության բարձրացմանը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Ի դեպ, մեր կողմից մշակված «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին կառավարությունը հավանություն է տվել (2013 թ., դեկտեմբերի 19-ի նիստ):

Գրականության ցանկ

1. Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012 թվականներ, 2013 թվականի հրապարակումներ:
2. Արդյունաբերական քաղաքականություն, Ա.Հ. Արշակյան, Ա.Ա.Արշակյան, Երևան, 2004 թ.:
3. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք:
4. «Կոնյակագործության ագրոտնտեսական հիմնախնդիրները», Միջբուհական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009 թ.:
5. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց / Կառավարման պրակտիկայի բարելավման օրակարգը 2011/2012:- «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ, 2012 թ.:
6. Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, 2011 թ.:
7. Հայաստանի Հանրապետության կոնյակագործության ոլորտային ռազմավարություն, 2011-2020 թթ.:
8. ՀՀ Կառավարության 18 սեպտեմբերի 2008 թվականի N 1253-Ն որոշում:
9. Ճշգրիտ ճարտարագիտություն ոլորտային ռազմավարություն 2011 – 2020 թթ.:
10. Ճարտարագիտական նախագծման ոլորտի հետազոտություն և իրագործելիության ուսումնասիրություն.- Հաշվետվություն 2010 թ., «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն:
11. Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտ, գործողությունների ծրագիր 2012 – 2015 թթ./ Եր. 2012 թ.:
12. Մ.Մելքոնյանի և Վ.Հակոբյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ, «Ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում», «Ձանգակ-97» Երևան, 2008 թ.:
13. Մրցունակության համաշխարհային զեկույց 2012-2013 թթ., «Տնտեսություն և արժեքներ» հետազոտա-

կան կենտրոն «Ի-Վի Քոնսալթինգ» Երևան, սեպտեմբերի 5, 2012 թ.:

14. Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում (CAPS):
15. 45 ընկերությունների ՄԱԿ-ի հետազոտություն, հեղինակ՝ Օտտո:
16. Хорев А. И., Приоритетные направления промышленной политики предприятия [Текст]/А.И. Хорев, Ю.А. Саликов, Е.Ю. Саликова. – Воронеж: ВГТА. – 2005. –158 с. –300 экз. –ISBN 5 89448 358-1.
17. MINING INDUSTRY in ARMENIA, p. 39.
18. Էլեկտրոնային տեղեկատվական բազա.
19. ՄԱԿ-ի Comtrade աղանց բազա, WB WDI:
20. www.mineconomy.am
21. www.competition.am
22. www.taxservice.am
23. www.armstat.am
24. www.armcci.am
25. www.ada.am
26. www.b24.am

АННОТАЦИЯ

М.С. Мелкумян, А.В. Калантарян, Ф.Ф. Багарян,
М.А. Аветисян, А.Ж. Овакимян

Осуществление промышленной политики как фактор повышения конкурентоспособности экономики РА

В протяжении всего периода исследования основная деятельность научно – исследовательской группы была направлена на выявление проблем принятых правительством приоритетных отраслей экономики, таких как производство коньяка, точная инженерия, горнодобывающая промышленность, химическая промышленность.

SUMMARY

M.S. Melkumyan, A.V. Kalantaryan, F.F. Baharyan,
M.A. Avetisyan, H.J. Hovakimyan

Industrial Policy as a Factor in Increasing the Competitiveness of the Economy of RA

The works carried out by the research group's members during the period of research time were directed to identify problems in following sectors that were declared as priorities by the government: brandy, precision engineering, mining industry, chemical industry.

**ՀՊՏՀ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸԱՐՔԻՑ**

Ծրագրի գիտական ղեկավար՝
տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Մելքումյան

Կատարողներ՝
տ.գ.թ. Ա.Վ. Քալանթարյան
տ.գ.թ., դոցենտ Ֆ.Ֆ. Բահարյան
դասախոս Մ.Ա. Ավետիսյան
ասպիրանտ Հ.Ժ. Հովակիմյան

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Խմբագիր՝ Ս. Ալավերդյան
Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պեպրոսյանի
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 60×84¹/₁₆:
4,75 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37